

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**

**ՀՐԱՅՐ ՎԱՐԴԱՆԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ**

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԻՍԱՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՁԵՎԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
(ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՈՂԵԼ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)**

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**Երևան 2017**

Ատենախոսության թեման հաստատվել է պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդում:

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գ. Գ. Հարությունյան**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Վ. Վ. Ստեփանյան**

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Հ. Հ. Հակոբյան**

**Առաջատար կազմակերպություն՝**

**Երևանի պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 12:00-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող Իրավագիտության 041 մասնագիտական խորհրդում (0028, ք. Երևան-28 , Կիևյան 8):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2017 թվականի օգոստոսի 21-ին:

**Մասնագիտական խորհրդի  
գիտական քարտուղար  
իրավաբանական գիտությունների  
թեկնածու, դոցենտ**

**Հ. Ստեփանյան**

## Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Կառավարման ձևի հասկացությունը, դրա բովանդակությունը, տեսակներն ու ենթատեսակները, դրանց առավելություններն ու թերությունները, ժողովրդավարական և ոչ ժողովրդավարական լինելը բանավիճային են, ամբողջությամբ ուսումնասիրված չեն:

Հանրային իշխանության կազմակերպման՝ աշխարհում տարածված մոդելների մասին գիտելիքներն ունեն ոչ միայն տեսական, այլ նաև գործնական արժեք, մասնավորապես՝ թույլ են տալիս ամբողջական պատկերացում կազմել այս կամ այն պետականության արդի վիճակի մասին, բացահայտում են դրա փոփոխման և զարգացման որոշակի օրինաչափություններն ու միտումները:

Կառավարման կիսանախագահական ձևը շատ ավելի նոր է, քան կառավարման նախագահական և պառլամենտական դասական ձևերը, սակայն մեր օրերում այն արդեն իսկ բավականին տարածված է: Ներկայում աշխարհի շուրջ երկու հարյուր պետությունների 20 տոկոսից ավելին, առնվազն ֆորմալ-սահմանադրական կարգավորումներով, ներկայացնում է կառավարման հենց այդ ձևը: Աշխարհագրական առումով կառավարման այս ձևն այսօր առկա է գրեթե բոլոր մայրցամաքներում: Նախորդ դարի 80-ական թվականների վերջերին և 90-ականների սկզբներին՝ սոցիալիստական ճամբարի փլուզումից հետո, մի քանի տասնյակ պետությունների համար կառավարման ձևի ընտրության հարցը դարձավ արդիական: Ուշագրավ է, որ այդ երկրներից միայն քչերն ընտրեցին կառավարման երկու դասական ձևերից որևէ մեկը և հիմնականում նախապատվությունը տվեցին կառավարման կիսանախագահական ձևի այս կամ այն տեսակին:

Սոցիալիստական ճամբարի երկրներում սկսվեց սոցիալ-տնտեսական ու քաղաքական համակարգերի բարեփոխման գործընթացը, որն ստացավ «հետկոմունիստական համակարգային փոխակերպում» անվանումը: Գործընթացի էությունը բաշխողական տնտեսությունից ու ավտորիտար ռեժիմից դեպի շուկայական տնտեսավարում և ժողովրդավարական հասարակություն անցումն էր, ինչը պետք է նպաստեր այդ երկրների սոցիալ-տնտեսական արդյունավետ զարգացմանը: Գլխավոր հարցը վերաբերում էր իշխանությանը, ամենից առաջ նրա աղբյուրին ու կազմակերպական-իրավական ձևերին:

Խորհրդային համակարգի փլուզումից հետո նորանկախ երկրներում առաջացած անկայուն իրավիճակը խթան հանդիսացավ, որպեսզի քաղաքական գործիչները ընտրություն կատարեն ուժեղ, կենտրոնաձիգ կառավարման օգտին, որտեղ իշխանության եկած լիդերն ուներ գերակա դիրք, քանզի մարմնավորում էր անկախության համար պայքարը: Նման իրողությունների համար կառավարման կիսանախագահական ձևը կատարյալ էր, քանի որ այն նախատեսում էր Հանրապետության նախագահի համաժողովրդական ընտրություններ, միաժամանակ՝ բացառապես կառավարության պառլամենտական պատասխանատվություն՝ Հանրապետության նախագահին դուրս դնելով դրա շրջանակից: Ընդունված է, որ վերջինիս վառ օրինակը Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետությունն է: Նորանկախ երկրները, սակայն, ամբողջությամբ չընդօրինակեցին դասական ֆրանսիական մոդելը: Նախապատվությունը տրվեց կառավարման կիսանախագահական ձևի այն տարբերակին, որտեղ Հանրապետության նախագահի դիրքը շատ ավելի ուժեղ է: Քիչ ժամանակ անց այս երկրները կրկին կանգնեցին կառավարման ձևի ընտրության առջև, քանզի տեղի ունեցող գործընթացները հրամայական դարձրին կառավարման ձևի վերանայում: Սակսեցին դիտարկվել կառավարման այլ ձևի անցնելու տարբերակներ ևս:

Տեսական գրականության մեջ, քաղաքագիտական բանավեճերում տեսական ժամանակ գեր-իշխող էր այն տեսակետը, որ կառավարման կիսանախագահական ձևը ներառում է կառավարման նախագահական ու պառլամենտական ձևերի դրական կողմերը, և որ այն կարող է լավ այլընտրանք լինել կառավարման այս երկու ձևերի համար: Եթե այս պնդումը կիրառելի է ֆրանսիական մոդելի համար, ապա հետխորհրդային երկրների փորձը երբեմն-երբեմն, ցույց է տալիս հակառակը, այն, որ խնդրո առարկա կառավարման ձևը անհաջող փորձ է անհամատեղելին համատեղելու համար, և որ այն դիտարկվում է որպես իշխանության հակասական ու կոնֆլիկտածին կառուցվածք, որը, թերևս, վատ այլընտրանք է թե՛ կառավարման նախագահական և թե՛ կառավարման պառլամենտական ձևերի համեմատ:

1990-ական թվականներին ուժեղացան բոլոր նրանց ձայները, ովքեր կառավարման կիսանախագահական ձևի մեջ, հատկապես երիտասարդ ժողովրդավարությունների համար, դրական և արժեքավոր ինչ-որ բան էին տեսնում: Հետսոցիալիստական երկրները սկսեցին ակտիվորեն փորձարկել դա՝ իրենց սահմանադրություններում միավորելով նախկինում անհամատեղելի թվացող տարրերը:

Դիտարկվում էին կառավարման նախագահական ու պառլամենտական ձևերին բնորոշ տարրերի ամենատարբեր համադրումներ, որոնց արդյունքում տարբեր կառավարման ձևերում առկա զսպումների ու հակակշիռների արդյունավետ մեխանիզմները ոչ միայն դադարում էին գոյություն ունենալուց, այլև այդ կառավարման ձևերը ձեռք էին բերում նոր հատկանիշներ, որոնք բնորոշ չէին ո՛չ կառավարման նախագահական և ո՛չ էլ կառավարման պառլամենտական ձևերին:

Նոր ինքնիշխան պետությունների քաղաքական «ինժեներները» չէին բավարարվում իրենց երկրներում կառավարման նախագահական ու պառլամենտական ձևերի տարրերի ուղղակի ներդրմամբ. նրանք իրենց սահմանադրական որոնումների մեջ շատ ավելի առաջ էին գնում: Արդյունքում՝ կառավարման կիսանախագահական ձևը ամենատարբեր դրսևորումներով լայն տարածում ստացավ. կառավարման այս ձևն ունեցող երկրների թվաքանակը կրկնապատկվեց:

Այսպիսով, կառավարման կիսանախագահական ձևը, իբրև կառավարման նախընտրելի մոդել, վերջին տասնամյակներին «գրավել է» բավականին թվով նոր պետություններ: Բացի այդ՝ նկատվում է կառավարման կիսանախագահական ձևերի մեծ բազմազանություն, ինչը պահանջում է իրավագետների և քաղաքագետների առանձնակի մեծ ուշադրությունը:

Կառավարման կիսանախագահական ձևում պետության գլուխը՝ Հանրապետության նախագահը, ընտրվելով համընդհանուր ընտրությունների միջոցով, միաժամանակ գործադիր իշխանության միանձնյա ղեկավարը չէ և կիսում է իշխանությունը պառլամենտի առջև պատասխանատու կառավարության հետ: Սակայն հետխորհրդային երկրների մեծ մասի ավտորիտարիզմը հանգեցրեց նրան, որ ինչպես սահմանադրությունները, այնպես էլ քաղաքական պրակտիկան նմանեցվեցին կառավարման նախագահական համակարգին: Ըստ ներկայացվող կարծիքի՝ այս երկրների անցումը լիարժեք ժողովրդավարության պետք է ուղեկցվի կառավարման կիսանախագահական ձևից հրաժարվելու և դասական կառավարման ձևերից որևէ մեկն ընտրելու ճանապարհով:

1990-ական թվականների սկզբին Հայաստանի Հանրապետությունում կառավարման օպտիմալ ձևի որոնման փորձեր էին արվում: Քաղաքական բանավեճերի ու քննարկումների կիզակետում պետական իշխանության բարձրագույն մարմինների փոխհարաբերություններն էին: 1995թ. Ընդունված Սահմանադրությունը Հայաստանի Հանրապետությունում ամրագրեց կառավարման յուրահատուկ կիսանախագահական ձև, որը բնութագրվում էր պետական իշխանության անհավասարա-

կշռությամբ: Հայաստանի Հանրապետության ակադեմիական միջավայրում և քաղաքական հրապարակախոսության մեջ առկա էր այն իշխող պնդումը, որ Սահմանադրությունը «ձևված» է Հանրապետության՝ այդ ժամանակ պաշտոնավարող նախագահին համապատասխան, այդ իսկ պատճառով վերջինիս պաշտոնաթողությունից հետո անհրաժեշտ կլինի նոր Սահմանադրություն ընդունել: Այս կանխատեսումներն իրականացան. Հանրապետության առաջին նախագահի պաշտոնաթողությունից հետո՝ 1998 թվականին, սկսվեց սահմանադրական բարեփոխումների գործընթաց:

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո հրամայական էր դարձել պետության ու իշխանության կազմակերպման հայրենական մոդելի մշակման պահանջը: Հայաստանի Հանրապետության պետականության կայացումը պահանջում էր մշակել պետության կառուցման ու գործառման համապատասխան մոդել, սահմանել ժամանակին համահունչ կառավարման ձև, պետական կարգ, իշխանության կազմակերպման մեխանիզմներ, որոնք պետք է հիմնված լինեն «գաղումների ու հակակշիռների» արդյունավետ համակարգի վրա, նպաստեն պետական իշխանության մարմինների կայունության ապահովմանը և արդյունավետ փոխգործակցությանը:

Հայկական պետականության զարգացման պատմական միտումները և անկախ Հայաստանի Հանրապետության պետական-իրավական կայացման նորագույն պատմությունը պայմանավորել էին երկրի կառավարման կիսանախագահական ձևի ընտրությունը, որտեղ Հանրապետության նախագահը պետության գլուխն էր և կառավարության հետ կիսում էր գործադիր իշխանությունը: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին բնորոշ ժողովրդավարական հիմքերի զարգացումը հրամայական էր դարձնում պետական իշխանության բարձրագույն մարմինների կազմակերպման համակարգում փոխհարաբերությունների հետագա կատարելագործման, գործադիր իշխանության համակարգում գործառնությունների ու լիազորությունների վերաբաշխման, գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ուժեղացման անհրաժեշտությունը: Քսանվեց տարի անց կարելի է ամփոփել որոշ արդյունքներ և Հայաստանի Հանրապետությունում իրականացվող սահմանադրական ու վարչական բարեփոխումների համատեքստում վերլուծության ենթարկել կառավարման ձևի զարգացման հեռանկարները:

21-րդ դարի սկիզբը բնութագրվում է հայկական նոր պետականության կայացման ակտիվ գործընթացով, պետականություն, որը կհամապատասխաներ Հայաստանի Հանրապետության հասարակության զարգացման մակարդակին, ինչպես նաև ժամանակակից աշխարհի զարգացման միտումներին:

Նախորդ դարավերջի և այս դարասկզբի Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի ու քաղաքական վարչակարգի էության, տարատեսակի և զարգացմանն առնչվող հարցերի լուծումը թույլ է տալիս պարզել, թե մեզանում որքան են ուժեղ ժողովրդավարական միտումները, ինչն էլ հնարավորություն կընձեռի կանխատեսելու հայկական պետության և, ընդհանուր առմամբ, հասարակության զարգացումը տեսանելի ապագայում: Դա կօգնի հասկանալու ու սահմանելու Հայաստանի Հանրապետության տեղը, նրա դերը ամենից առաջ հետխորհրդային տարածաշրջանում և ընդհանրապես ժամանակակից աշխարհում:

Կառավարման ձևի ընտրությունը պետք է ունենա գիտական հիմնավորում: Դրա ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության արդի վիճակի ու զարգացման սոցիալ-մշակութային, քաղաքական, տնտեսական, տարածքային, իրավական, պատմական և այլ առանձնահատկությունները: Ցավոք, այս խնդիրների առնչությամբ տեսական ուսումնասիրությունները չափազանց քիչ են, իսկ գոյություն ունեցող մոտեցումները միշտ չէ, որ գործնականում կիրառելի են:

Յուրաքանչյուր երկրում կառավարման կիսանախագահական ձևի ներդրումը և գործառույթը եզակի է ու անկրկնելի: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ կառավարման կիսանախագահական ձևը չունի մեկ միասնականացված մոդել, այլ դրան բնորոշ են ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրաքանչյուր կոնկրետ պետության առանձնահատկություններով պայմանավորված՝ յուրահատուկ հատկանիշներ: Այս ընդհանուր և յուրահատուկ հատկանիշների վերհանումը արդիական հետազոտական խնդիր և մարտահրավեր է Հայաստանի Հանրապետության համար: Քանի որ պատմական հանգամանքների բերումով Խորհրդային Միության փլուզումից հետո առաջացան երկու հայկական պետականություններ, սույն աշխատությունը անդրադառնում է նաև Արցախի Հանրապետությունում կառավարման ձևի որոնման հիմնախնդրին: Ինչպես ցանկացած այլ պետության, Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության համար ևս կարևոր էր գտնել կառավարման օպտիմալ ձև և օրենսդիր-գործադիր փոխհարաբերությունների այնպիսի համակցություն, որը կարտահայտեր միջազգային դրական փորձը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության, նրանց հասարակությունների առանձնահատկությունները:

Այս կամ այն կառավարման ձևը, սահմանադրական մարմինների փոխգործակցության մեխանիզմներն ունեն իրենց առանձնահատկությունները, որոնք բացատրվում են տարբեր գործոններով ու հանգամանքներով, ունեն ինչպես օբյեկտիվ՝ պատմականորեն պայմանավորված բնույթ, այնպես էլ կրում են սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը: Դրանով պայմանավորված՝ արդիական է գիտական այն հիմնախնդրի լուծումը, որի առանցքը «կառավարման ձև» հասկացության սահմանումն է, դրա ուսումնասիրությունը, կառավարման տարբեր ձևերի առավելությունների և թերությունների վերհանումը, կառավարման կիսանախագահական ձևի՝ որպես կառավարման դասական ձևերին այլընտրանք լինելու հանգամանքի պարզումը, Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի սահմանադրաիրավական ու քաղաքական ասպեկտների վերլուծությունը և կառավարման ձևերի իրավական, քաղաքագիտական մշակման խնդիրը:

**Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը:** Չնայած կառավարման ձևի խնդիրների տեսական-իրավական տեսանկյունների վերաբերյալ եղած հետազոտություններին՝ պետք է ընդունել, որ դրանք, որպես կանոն, լիարժեք չեն արտացոլում պետական-իրավական իրական գործընթացները Հայաստանի Հանրապետությունում: Արտասահմանյան պետությունների քաղաքական վարչակարգերին ու կառավարման ձևերին վերաբերող հարցերի, կառավարման ձևի և այդ գաղափարի զարգացման պատմության մասին գոյություն ունի ծանրակշիռ գիտական գրականություն: Իսկ ինչ վերաբերում է ժամանակակից պայմաններում պետական-իրավական բարեփոխումների գործընթացների վերլուծությանը, ապա այս տեսանկյունը մնում է ամենաքիչ լուսաբանվածներից մեկը:

Կառավարման կիսանախագահական ձևը հայկական իրավաբանական և քաղաքական գիտությունների կողմից քիչ է ուսումնասիրված: Չնայած այդ հիմնախնդրի առանձին ասպեկտներ հայրենական հրապարակումներում լուսաբանվել են՝ իրավագիտության մեջ դրա վերաբերյալ հատուկ մենագրային հետազոտություններ չկան: Գիտական աշխատանքներ, որոնցում հետազոտվում են կառավարման կիսանախագահական ձևի տարբեր կողմերը, այնուամենայնիվ առկա են: Հաշվի առնելով այն իրողությունը, որ կառավարման ձևի հիմնահարցը հետխորհրդային երկրների տարածքում մեծ մասամբ նույնաբովանդակ է, ատենախոսությունում լայնորեն օգտագործվել են նախ այդ երկրների գիտնականների ուսումնասիրությունները: Խնդրի իրավական

ասպեկտը վերլուծված է Ժ.Դ. Ջհանգիրյանի «Իշխանությունների բաժանումը Հայաստանի Հանրապետությունում (սահմանադրական մոդել և պրակտիկա)» մենագրությունում<sup>1</sup>, Ա.Շ. Հարությունյանի «Նախագահի ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում» աշխատանքում<sup>2</sup>, Ա.Ա. Հարությունյանի «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մեջ<sup>3</sup>, Վ.Վ. Ստեփանյանի մի շարք գիտական հոդվածներում<sup>4</sup>:

Քաղաքագիտական տեսանկյունից հարցը համակողմանիորեն ուսումնասիրվել է Ա.Ա. Մարգարովի կողմից «Կիսանախագահական համակարգը հետխորհրդային տրանսֆորմացիայում» վերտառությամբ դոկտորական ատենախոսության մեջ<sup>5</sup>: Խնդրի իրավական և քաղաքագիտական ասպեկտներն ուսումնասիրված են Վ.Հ. Պողոսյանի մագիստրոսական աշխատանքում, ինչպես նաև գիտական մի շարք հոդվածներում<sup>6</sup>:

Հետխորհրդային պետություններում խնդիրը հետազոտության է ենթարկվել այնպիսի գիտնականների կողմից, ինչպիսիք են Օ.Ի. Ջազանը<sup>7</sup>, Վ.Ա. Գռուզինովը<sup>8</sup>, Լ.Ռ. Սիմոնիշվիլին<sup>9</sup>, Ա.Է. Կալինովիչը<sup>10</sup>, Ռ.Ս. Մարտինյուկը<sup>11</sup>, Ե.Լ. Բոլդիրևան<sup>12</sup>, Ա.Ա. Ավագյանը<sup>13</sup>, Ս.Ս. Աֆանասևը<sup>14</sup>, Վ.Ե. Զիրկինը<sup>15</sup> և այլք:

<sup>1</sup> Джангирян Ж. Д. Разделение властей в Республике Армения: (конституционная модель и практика), М., изд. МГУ, 2003:

<sup>2</sup> Арутюнян А. Ш. Институт президента Республики Армения. (Сравнительно-правовой анализ), Ереван, изд. Мхитар Гош. 1996:

<sup>3</sup> Հարությունյանի Ա. Ա. «Կառավարման ձևի կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսություն: Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա, Եր., 2016:

<sup>4</sup> Ստեփանյան Վ. Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրները ՀՀ խորհրդարանական կառավարման համակարգում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2017 № 1 (22), էջ 3-10, Ստեփանյան Վ. Հանրապետական կառավարման ժամանակակից ձևերի համեմատական վերլուծություն, Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2013, էջ 27-33, Ստեփանյան Վ., Թումանյանց Ե. Նախագահի և կառավարության փոխհարաբերությունները ՀՀ-ում, Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2010, էջ 27-34, Ստեփանյան Վ. Կառավարման խորհրդային ձևից դեպի կիսանախագահական հանրապետություն, Օրենք և իրականություն, 2003, N 19-20, էջ 1-3, Ստեփանյան Վ. Անցումային ժամանակաշրջանի սահմանադրական զարգացման առանձնահատկությունները ՀՀ-ում, Օրենք և իրականություն, 2003, N 16, էջ 1-2:

<sup>5</sup> Маркаров А. А. Полупрезидентализм в контексте постсоветской трансформации. Ереванский государственный университет, Ереван, 2008:

<sup>6</sup> Pogosjan W. H. Die verfassungspolitische Entwicklung in der Republik Armenien (1990 - 1995), unveröf. Magisterarbeit, Bonn, 1995; Պողոսյան Վ. Հ. Կառավարման ձևի ընտրության հիմնախնդիրները Հայաստանում, „Օրենք և իրականություն“, 2001 թ. հ. 1-3, 5, 8, 13; Պողոսյան Վ. Հ. Կառավարման կիսանախագահական ձևի առանձնահատկությունները Հայաստանում, /Ընտրված նյութերի ժողովածու / ուսուցում Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների փորձագետների համար: ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, Եր., 2004, էջ 41-68; Պողոսյան Վ. Հ. Կառավարման ձևերի ընտրության հիմնախնդիրները: ԵԱՀԿ: Ընտրված նյութերի ժողովածու: (ուսուցում Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների փորձագետների համար): ԵԱՀԿ երևանյան գրասենյակ, Եր., 2004, էջեր 69-85; Pogosjan W. H. Constitution of the Republic of Armenia, in: “Encyclopaedia of World Constitutions” (ed. Prof. Dr. Gerhard Robbers), 2006, Vol. 1, p. 42-46:

<sup>7</sup> Зазнаев О.И. Полупрезидентская система: политико-правовой анализ, Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Государственное образовательное учреждение высшего профессионального образования “Казанский государственный университет им В.И. Ульянова-Ленина”. Казань, 2006 юридических наук: 23.00.02. Казань, 2006:

<sup>8</sup> Грузинов В.А. Форма правления современного российского государства. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. На правах рукописи. Саратов, 2008:

<sup>9</sup> Симонишвили Л.Р. Форма правления (история и современность). М., изд. Флинта, 2007:

<sup>10</sup> Калинович А.Э. Форма правления в правовом государстве (теоретико-правовой аспект). Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. На правах рукописи. Санкт-Петербург, 2008:

<sup>11</sup> Мартынюк Р.С. Проблемы классификации президентализированной формы правления в постсоветских странах Восточной Европы и Азии. Вестник Томского государственного университета. Право. № 1 (7) / 2013, с. 48-61:

<sup>12</sup> Болдырева Е.Л. Сравнительный анализ полупрезидентских республик: На примере Финляндии и Франции: Диссертация на соискание ученой степени канд. полит. наук: 23.00.05. СПб., 2000:

Արտասահմանյան հեղինակներից հատկապես հարկ է առանձնացնել Մ. Դյուվերթեին<sup>16</sup>, Ջ. Սարտորիին<sup>17</sup>, Ռ. Էլջինին<sup>18</sup>, Մ.Ս. Շուգարտին, Ջ. Քերիին<sup>19</sup>, Ա. Լեյփհարտին<sup>20</sup>, Խ. Լինցին<sup>21</sup>, Ս. Սկաչին<sup>22</sup> և այլոց:

Արևմտյան գրականության մեջ առավելապես քննարկվում են կառավարման տարբեր ձևերի առավելություններն ու թերությունները, ինչպես նաև կապը կառավարման ձևերի ու ժողովրդավարության միջև: Բավականին մեծ թիվ են կազմում կառավարման կիսանախագահական ձևի տարբեր կողմերի ուսումնասիրություններին նվիրված աշխատանքները, որոնք կարևոր նշանակություն ունեն այս կառավարման ձևի վերաբերյալ ընդհանուր տեսության մշակման համար: Խնդրո առարկայի հետազոտության գործում էական ներդրում ունի ֆրանսիացի իրավաբան, քաղաքագետ և սոցիոլոգ Մ. Դյուվերթեն: Կան նաև աշխատություններ, որոնք վերաբերում են առանձին երկրների կառավարման կիսանախագահական ձևի վերլուծությանը: Դրանք նախևառաջ նվիրված են Ֆրանսիայի 5-րդ Հանրապետությանը<sup>23</sup>: Վերջին տարիներին երևան են եկել կառավարման կիսանախագահական ձև ունեցող առանձին երկրներին ու դրանց առանձին ինստիտուտներին նվիրված տարածաշրջանային համեմատական հետազոտություններ<sup>24</sup>:

Հայրենական գրականության մեջ առկա են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ<sup>25</sup>, պարզաբանումներ<sup>26</sup>:

Զնայած կառավարման կիսանախագահական ձևի առանձին ասպեկտներ արտացոլվել են գիտական գրականության մեջ, այնուամենայնիվ անհրաժեշտ է փաստել, որ մեզանում չկա և ոչ մի մենագրություն, գիրք կամ գրքույկ՝ «Կառավարման կիսանախագահական ձև» առանձին թեմայով:

<sup>13</sup> Авакьян С.А. Конституционное право России [Текст]: учеб. курс. В 2 т. / С.А. Авакьян. М., изд. Юристъ, 2010. - 2 т..

<sup>14</sup> Российская Федерация: слабое государство и «президентская вертикаль» [Текст] /М.Н. Афанасьев// Страна после коммунизма: государственное управление в новой России : в 2 т. Т. 1. - М., Институт права и публичной политики, 2004, с. 175-206:

<sup>15</sup> Конституционные институты формы государства [Текст] /В.Е. Чиркин// Сравнительное конституционное право: уч. пособие / отв. ред. В.Е. Чиркин. М., изд.Междунар. отношения, 2002. с 248-292:

<sup>16</sup> Duverger M. Echec au roi, Paris 1978: M. Duverger, Bréviaire de la cohabitation, Paris, (PUF). 1986, Duverger M. Les Regimes semi-presidentiels I Publ. sous la direction de M.Duverger. [Paris]: Presses univ. de France, 1988, M. Duverger, Le système politique français. Droit constitutionnel et Science politique, 21. édition, Paris, 1996, Duverger M. A New Political System Model: Semi-Presidential Government // European Journal of Political Research, June 1980. P. 165-187:

<sup>17</sup> Sartori G. Comparative Constitutional Engineering (Second Edition) 2nd ed. Edition Published in the U.S.A by New York University press, 1997:

<sup>18</sup> Elgie R., Semi-Presidentialism: Sub-Types and Democratic Performance (Comparative Politics), Oxford University Press, 2011, Elgie R., Moestrup S., Wu Yu-Shan (eds.), Semi-Presidentialism and Democracy Palgrave Macmillan, 2011:

<sup>19</sup> Shugart M.S., Carey J.M., Presidents and Assemblies. Constitutional Design and Electoral Dynamics; Siaroff A. Comparative Presidencies: The Inadequacy of the Presidential, Semi-Presidential and Parliamentary Distinction, II European Journal of Political Research, 2003, Vol. 42. Issue 3, May 2003.

<sup>20</sup> Parliamentary versus Presidential Government, I ed. by A.Lijphart. - Oxford: Oxford University Press, 2000.

<sup>21</sup> The Failure of Presidential Democracy. Comparative Perspectives, I ed. by J.J.Linz, A.Valenzuela, Baltimore; L., The Johns Hopkins University Press, 1994:

<sup>22</sup> Stéu Skach C. Borrowing Constitutional Designs: Constitutional Law in Weimar Germany and the French Fifth Republic, Princeton, NJ: Princeton University Press, 2005:

<sup>23</sup> Stéu Ардан Ф. Франция: государственная система. М., Изд. Юрид. лит., 1994:

<sup>24</sup> Elgie R. Semi-presidentialism in Europe, Oxford University Press, 1999, R. Elgie, S. Moestrup, Semi-Presidentialism in Central and Eastern Europe, Manchester University Press, 2008, R. Elgie, S. Moestrup, Semi-presidentialism outside Europe: A comparative study, Routledge 2007, R. Elgie, S. Moestrup, Semi-Presidentialism in the Caucasus and Central Asia, Palgrave Macmillan, 2016:

<sup>25</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., «Իրավունք» իրատ. 2010:

<sup>26</sup> Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ: Եր., «Տիգրան Մեծ» իրատ, 2016:



Այլ է իրավիճակը արևմտյան գիտության մեջ, որտեղ այս հիմնահարցը մշակվում է վերջին մի քանի տասնամյակների ընթացքում: Սակայն այստեղ ևս հեռու են կառավարման կիսանախագահական ձևի համալիր տեսության ստեղծումից, գիտության մեջ դեռևս բացակայում են կառավարման կիսանախագահական ձևի վերլուծության հստակ, բոլորի կողմից ընդունելի, հայեցակարգային մոտեցումներ:

Իսկապես, կիսանախագահականության հիմնախնդրի տեսաբանական մշակման կարիքը կա: Քիչ հետազոտված են կառավարման կիսանախագահական ձևի այնպիսի էական ասպեկտներ, ինչպիսիք են կառավարման այդ ձևի գործառնությունը, կիսանախագահականության տարատեսակների ներդրման արդյունքները, այդ համակարգի էվոյուցիան և այլն: Ուսումնասիրված չեն Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի ինստիտուցիոնալացումը, նախագահականացումը և զարգացման հեռանկարները: Բացի այդ՝ առկա են վիճահարույց մի շարք հարցեր, որոնք վերաբերում են «կառավարման կիսանախագահական ձև» հասկացությանը, առանձնահատկություններին, բնույթին, զարգացման միտումներին, առավելություններին ու թերություններին: Շատ բացեր և վիճահարույց պահեր կան՝ կապված այնպիսի խնդիրների հետ, ինչպիսիք են կառավարման ձևերի հասկացությունը և տիպաբանությունը, խառը ձևերի դասակարգումը: Այս ամենը վկայում է այն մասին, որ առկա է ինչպես կիսանախագահականության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության կառավարման ձևերի հիմնախնդրի տեսաբանական մշակման կարիք:

**Հետազոտության օբյեկտը** «կառավարման ձև» հասկացությունն է, դրա տարատեսակները, կառավարման կիսանախագահական ձևի բնույթն, էությունը, բովանդակությունը, գործառման առանձնահատկությունները, հիմնական դրսևորումներն ու էվոյուցիան, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կառավարման ձևերը՝ որպես ժամանակակից հայկական պետությունների իրավական կազմակերպման ու գործառման բաղկացուցիչներ:

**Հետազոտման առարկան** են Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության իրավական համակարգում ձևավորված Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի և կառավարության ինստիտուտները և, հատկապես, դրանց կազմավորման, կազմակերպման ու գործառման սահմանադրական երաշխիքները, յուրաքանչյուր ինստիտուտի դերը պետության կառավարման մեջ, դրանց փոխհարաբերությունները միմյանց և բնակչության հետ:

**Հետազոտության նպատակը** արդիական քաղաքական պրակտիկայի և կառավարման ձևերի հայեցակարգի պայմաններում կառավարման կիսանախագահական ձևի առավելությունների, թերությունների, Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում դրանց կիրառման նպատակահարմարության տեսաբանական ու գործնական ասպեկտների համալիր վերլուծությունն է:

Այս նպատակի իրագործումը պահանջում է լուծել հետևյալ խնդիրները՝

-հետազոտել «կառավարման ձև» հասկացությունը, նրա իմաստային ու գիտական լրացման և քաղաքագիտական այլ կատեգորիաների հետ նրա փոխկապվածության էվոյուցիան,

-կիրառելով համեմատական-իրավական մեթոդը՝ ցույց տալ պետական իշխանության դրսևորման տարբերակների յուրօրինակությունը զարգացած երկրների պետականակերտման պրակտիկայում առկա կառավարման տարբեր ձևերում,

-բացահայտել հիմնական միտումները և դիտարկել պետական իշխանության բարձրագույն մարմինների փոխգործակցության հեռանկարները՝ հաշվի առնելով դրանց սահմանադրական լիազորությունների և իրապես գոյացած առաջնահերթությունների վերլուծությունը,

-բնութագրել կառավարման ձևերի և մասնավորապես կառավարման կիսանախագահական ձևի վերլուծության տեսա-մեթոդաբանական հիմքերը,

-նորարարություններ մտցնել իրավական և քաղաքական գիտություններում օգտագործվող հասկացությային ապարատի մեջ, մասնավորապես, կիսանախագահական համակարգի բնութագրման առումով,

-վերլուծել «կառավարման կիսանախագահական ձև» հասկացությունը, հատկանիշները, տարատեսակները և յուրահատկությունը, վերհանել կառավարման կիսանախագահական ձևի առավելությունները և թերությունները՝ համեմատելով կառավարման նախագահական և պառլամենտական ձևերի հետ,

-պատմական մեթոդի օգնությամբ հետազոտել կառավարման ձևի փոփոխման պատմությունը Հայաստանի Հանրապետությունում՝ 1991 թվականից մինչև այսօր, վերլուծության ենթարկել Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի և կառավարության կայացման ու զարգացման պատմական փուլերը,

-բնութագրել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կառավարման ձևերի սահմանադրաիրավական և պրակտիկ-քաղաքական կողմերը,

-հետազոտել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կառավարման ձևերի դինամիկան, զարգացման միտումները՝ զուգակցելով իրավաբանական ու քաղաքագիտական մոտեցումները,

-սահմանել պետական իշխանության բարձրագույն մարմինների փոխհարաբերությունների պրակտիկայի օպտիմիզացման ու ներդաշնակեցման ուղիները:

Այս ամենի ուսումնասիրության առկա անբավարար մակարդակը դժվարացնում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կառավարման ձևերի զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների որոնումը, նրանց քաղաքական և իրավական մշակույթի մակարդակի, ինչպես նաև սոցիալական մի շարք այլ գործոնների հետ կառավարման ձևի համապատասխանությունը:

Բերված հանգամանքները հրատապ են դարձնում ինչպես Հայաստանի Հանրապետությունում կառավարման ձևի տեսական հիմքերի, այնպես էլ նրա այն հատկանիշների սահմանադրական-իրավական վերլուծության պահանջը, որոնք ձևավորում են պետական իշխանության կառուցվածքը և համակարգը Հայաստանի Հանրապետությունում: Նման հետազոտության արժեքը չի սահմանափակվում Հայաստանի Հանրապետության պետական պրակտիկայով. այն օգտակար է Անկախ Պետությունների Համագործակցության, այլ պետություններում ընթացող սահմանա-դրական-իրավական գործընթացների վերլուծության համար ևս:

Այս առնչությամբ առաջանում է անխուսափելի պահանջ՝ ստեղծագործաբար զարգացնելու կառավարման ձևի կատարելագործման խնդիրների ըմբռնման ոլորտում կուտակված փորձը՝ միաժամանակ հաշվի առնելով, որ պետական իշխանության ինստիտուտների բովանդակության ու էության ոչ լիարժեք կամ ոչ ստույգ ընկալումը կարող է հանգեցնել մեթոդաբանական տարաբնույթ և լուրջ սխալների: Կառավարման ձևերի մասին գոյություն ունեցող ընդհանուր տեսական գիտելիքների հարստացումը և ընդլայնումն իրենց հերթին կնպաստեն Հայաստանի Հանրապետության պետականության ձևավորման պրակտիկ խնդիրների լուծմանը:

**Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը** քաղաքական ինստիտուտների, պետության և կառավարման ձևերին նվիրված հետազոտությունների համար մեթոդաբանական նշանակություն ունեն և սույն ստենախոսության հիմք են հանդիսացել փիլիսոփայական և քաղաքագիտական-իրավաբանական մտքի դասականներ Պլատոնի, Արիստոտելի, Ա. Համիլտոնի, Հեգելի, Թ. Հոբբսի, Ջ. Լոկի, Ն. Մաքիավելլու, Շ. Մոնտեսքյոյի, Ժ.Շ. Ռուսոյի, Վ. Վիլսոնի և այլոց աշխատությունները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը ամենից առաջ ինստիտուցիոնալ մոտեցումն է՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանության համակարգի ձևավորման ու գործառնման տարբեր ասպեկտների վերլուծման նկատմամբ:

Կառավարման կիսանախագահական ձևի հիմնախնդիրը մշակելիս հետազոտությունը հենվում է կառավարման ձևերի ընդհանուր տեսության տեսամեթոդաբանական հիմքերի վրա: Մեթոդաբանական կողմնորոշիչների որոշման մեջ կարևորվել են նաև այլ գիտությունների՝ փիլիսոփայության, տրամաբանության, սոցիոլոգիայի, պատմության, ներկայացուցիչների աշխատանքները:

Սույն հետազոտության համար հիմք է հանդիսացել նոր ինստիտուցիոնալ և համեմատական մեթոդների սինթեզը: Առաջադրվում է այն ենթադրությունը, որ նոր ինստիտուցիոնալիզմի շրջանակներում հենց կառավարման ձևերի համեմատական ուսումնասիրությունն է հնարավորություն տալիս հստակ պատկերացում կազմելու կառավարման կիսանախագահական ձևի մասին և վերհանելու ժամանակակից պայմաններին համապատասխան կառավարման ձևը: Համեմատական մեթոդը կիրառվել է Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության և արտասահմանյան երկրների կառավարման ձևերի սահմանադրաիրավական հիմքերի ու գործառնման փորձի ուսումնասիրման համար, ինչը հնարավորություն է տվել խորապես հասկանալու հետազոտության օբյեկտը, գիտական կատեգորիալ ապարատի միջոցով բացատրելու նրա յուրահատկությունը, հաստատելու կամ հերքելու եղած վարկածներն ու առաջ քաշելու նորերը, գնահատելու արտասահմանյան կառավարման ձևերի պրակտիկական, պետության ինստիտուցիոնալ կառուցվածքի շրջանակներում հասկանալու գործընթացների բովանդակությունը, տեղին օգտագործելու միջազգային առաջավոր փորձը՝ պետական իշխանության մարմինների միջև օպտիմալ փոխհարաբերություններ ձևավորելու նպատակով: Համեմատական մեթոդի կիրառությունը հնարավորություն է տալիս ստեղծելու կառավարման ձևերի ունիվերսալ տեսություն: Համեմատական-իրավական մեթոդը օգտագործվել է մասնավորապես այլ պետությունների կառավարման ձևերի մոդելների հետ համեմատությամբ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության դիտարկման ժամանակ:

Իր նոր հարցադրումներով ինստիտուցիոնալ մոտեցումն ուղղված է կառավարման կիսանախագահական ձևի ֆորմալ-իրավական ու քաղաքական կողմերի միջև կապի հաստատմանը և նպատակ ունի կառավարման կիսանախագահական ձևն ուսումնասիրելու միջառարկայական տեսանկյունից: Կառավարման կիսանախագահական ձևը ազդում է տնտեսական, քաղաքական և հասարակական այլ գործընթացների վրա՝ կանխորոշելով տարբեր դերակատարների վարքագիծը: Ատենախոսության մեջ հետազոտվում է կառավարման կիսանախագահական ձևի և ժողովրդավարության, կառավարման արդյունավետության կապը:

Համակարգային մոտեցումը, հիրավի, օգտակար է հասկացությային ապարատի վերլուծության, ինչպես նաև կառավարման կիսանախագահական ձևի բնույթի ու էության բացահայտման ժամանակ, քանի որ կառավարման ցանկացած ձև առաջին հերթին պետական իշխանության մարմինների միջև հարաբերությունների համակարգ է:

Պատմական մեթոդն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կառավարման ձևերի ու արտասահմանյան կառավարման կիսանախագահական ձևերի էվոլյուցիայի ուսումնասիրության համար:

Տիպաբանական մեթոդը սույն ատենախոսության շրջանակներում կիրառվող ամենաէական մեթոդներից է: Կառավարման կիսանախագահական ձևի՝ որպես կառավարման առանձին տեսակի դիտարկումն անհնար է առանց կառավարման ձևերի գիտական տիպաբանության: Աշխատանքում կիրառվել են նաև տրամաբանական այլ մեթոդներ:

Կոնկրետ-պատմական մեթոդը կիրառվել է հայկական պետականության ձևավորման պատմության վերլուծման ժամանակ, տեսական-կանխատեսման մեթոդը՝ իրավական պրակտիկային և օրենքների նախագծման աշխատանքին առնչվող կոնկրետ հարցերի վերաբերյալ հանձնարարականների նախապատրաստման ժամանակ:

Հետազոտության նորմատիվ հիմքը կազմել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, ենթօրենսդրական ակտերը, հայրենական իրավունքի այլ աղբյուրներ, արտասահմանյան երկրների սահմանադրությունները և այլ նորմատիվ ակտեր, միջազգային նորմատիվ-իրավական մի շարք փաստաթղթեր: Ատենախոսության մեջ օգտագործված մեթոդների համակցությունը կանխորոշել է անդրադարձը ոչ միայն Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի արդիական խնդիրներին, այլ նաև պետության ու իրավունքի տեսության, միջազգային, վարչական, մունիցիպալ և այլ ճյուղերի իրավունքի տեսության հարցերին, թույլ է տվել նախ գնահատել Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների համակարգի ժամանակակից վիճակը, երկրորդ՝ այն հարաբերակցել հայկական պետականության զարգացման պլաններին ու հեռանկարներին, և երրորդ՝ մշակել դրանց իրականացման իրավական ընթացակարգերն ու իրավական մեխանիզմները:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Սույն ատենախոսությունը հայրենական գիտության մեջ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կառավարման ձևերի հիմնահարցերին նվիրված առաջին համալիր հետազոտությունն է: Ատենախոսության մեջ ցուցաբերված է միջդիսցիպլինար մոտեցում, որը համակցում է իրավաբանական և քաղաքագիտական ասպեկտները:

**Հետազոտության գիտական նորույթը, մասնավորապես, հետևյալում է՝**

-էական նորամուծություններ են կատարվել իրավագիտության հասկացությամբ ապարատի մեջ, մասնավորապես հստակեցվել են մի շարք հասկացություններ՝ «մոդեռնիզացված պառլամենտական կառավարման ձև», «մոդեռնիզացված նախագահական կառավարման ձև» և այլն,

-իրականացվել է կառավարման կիսանախագահական ձևի հայաստանյան և արցախյան տարբերակների համալիր վերլուծություն,

-համեմատական համատեքստում դիտարկվել են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության կառավարման կիսանախագահական ոչ տիպիկ ձևերի սահմանադրաիրավական և պրակտիկ-քաղաքական կողմերը, ցույց են տրվել հայաստանյան և արցախյան կառավարման կիսանախագահական ձևի արատներն ու դրանց առաջացման պատճառները,

-տրվել է Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում կառավարման կիսանախագահական ձևից հրաժարվելու տեսական ու պրակտիկ հիմնավորումը,

-բացահայտվել են կառավարման կիսանախագահական ձևի նախագահականացման բովանդակությունը և գործոնները,

-տրվել են Հայաստանում Հանրապետությունում մոդեռնիզացված պառլամենտական, իսկ Արցախի Հանրապետությունում կառավարման մոդեռնիզացված նախագահական ձևի անցնելու հիմնավորումները:

**Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:**

**Պաշտպանության համար առաջադրվել են հետևյալ հիմնական դրույթներն ու հետևությունները.**

1. Անցումային փուլում գտնվող պետություններում Հանրապետության նախագահներին տրված ծանրակշիռ լիազորությունները՝ որպես երկրի քաղաքական կայունության ապահովման գրավական դիտարկելը, հիմնավոր չէ:

2. Բացի սահմանադրական բարձրագույն մարմինների սահմանադրորեն ամրագրված գործառույթներից, իրավասություններից, իրենց լիազորությունների իրականացումից բխող հարաբերությունների լայն համալիրից, առկա են նաև սահմանադրական և քաղաքական մի շարք գործոններ, որոնք, որոշակի զուգադրման դեպքում, որոշիչ դեր են խաղում կառավարման ձևի իրական բովանդակության համար (պառլամենտական մեծամասնության առկայություն, Հանրապետության նախագահի դիրքը դրա նկատմամբ և այլն):

3. Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի պրակտիկայի ուսումնասիրությունը հաստատում է այն թեզը, որ կառավարման կիսանախագահական ձևի պայմաններում Հանրապետության նախագահի իշխանության ուժի հիմնական աղբյուրը ոչ թե նրա սահմանադրական լիազորություններն են, այլ նրա չհավասարակշռված լիազորությունների ուժով ձևավորված՝ պառլամենտական մեծամասնության նկատմամբ նրա դիրքը:

4. Կառավարման կիսանախագահական ձևը, լինելով կառավարման նախագահական ու պառլամենտական «մաքուր» ձևերի համակցություն, ոչ միայն չի վերացնում կառավարման նախագահական և պառլամենտական ձևերի թերությունները, այլև ստեղծում է միայն իրեն բնորոշ թերություններ:

5. Գործադիր իշխանության կայունությամբ, հաշվետվողականությամբ, ժողովրդավարության աստիճանով կառավարման պառլամենտական ձևը գերազանցում է կառավարման նախագահական և կիսանախագահական ձևերին:

6. 1995թ. Սահմանադրությունն ուղղակիորեն հարցականի տակ էր դնում, մասնավորապես, փոխադարձ զսպումների և հակակշիռների մեխանիզմները՝ ամրագրելով Հանրապետության նախագահի գերակա դերը իշխանության բոլոր ճյուղերի նկատմամբ:

7. 2005թ. նախագահական-պառլամենտական մոդելից անցումը պառլամենտական-նախագահական մոդելի de jure հավասարակշռեց քաղաքական իշխանությունների միջև հարաբերությունները, սակայն քաղաքական պրակտիկայում Հանրապետության նախագահը, միաժամանակ լինելով պառլամենտական մեծամասնության լիդեր, շարունակեց հանդես գալ որպես գերակա քաղաքական գործոն:

8. Կառավարման կիսանախագահական ձևի ներուժը բավարար չէր հայկական երկու պետությունների առջև ծառայած խնդիրների լուծման համար: Կառավարման կիսանախագահական ձևը պարունակում է կոնֆլիկտներ ու փակուղիներ ստեղծելու մեծ ներուժ, որի պայմաններում կառավարման այդ ձևի շրջանակներում կատարված փոփոխությունները չեն կարող ամբողջությամբ լուծել խնդիրները, վերացնել կառավարման այդ ձևի թերությունները:

9. Հայաստանի Հանրապետությունում կառավարման մոդեռնիզացված պառլամենտական, իսկ Արցախի Հանրապետությունում կառավարման մոդեռնիզացված նախագահական ձևի անցնելը օբյեկտիվ անհրաժեշտություն էին պայմանավորված Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական զարգացման ավանդույթներով ու առանձնահատկություններով:

**Աշխատանքի տեսական ու պրակտիկ կարևորությունը:**

Ատենախոսության տեսա-գործնական նշանակությունը Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի կատարելագործման ուղիների վերլուծության և վերհանման, Հայաստանի Հանրապետությունում 2005թ. և 2015թ. սահմանադրական բարեփոխումների, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում 2017թ. նոր Սահմանադրության ընդունմամբ պետական իշխանության համակարգի կայացման առանձնահատկությունների հետազոտման մեջ է:

Ատենախոսության մեջ հատուկ ուշադրության է արժանացել Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմինների իրավասությունների իրականացման կառուցվածքային-ֆունկցիոնալ կողմին, պետական կառավարման համակարգի կատարելագործման, սահմանադրական մարմինների լիազորությունների կրկնորդումից խուսափելու հետ կապված հարցերին:

Աշխատանքում բովանդակված դրույթները, հետևություններն ու առաջարկությունները կապված Հայաստանի Հանրապետության պետական-իրավական զարգացման արդի հարցերի հետ, ձևավորում են անհրաժեշտ տեսական բազա Հայաստանի Հանրապետությունում պետական կառավարման կայունության ապահովման, պետական իշխանության համակարգի կատարելագործման պրակտիկ միջոցառումների հիմնավորման համար:

Ատենախոսության հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները կարող են կիրառվել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմանադրական մարմինների հարաբերությունները կարգավորող օրենսդրության հետագա կատարելագործման համար: Սույն հետազոտության արդյունքները կիրառելի են իրավաբանական և քաղաքական մի շարք գիտակարգերի կողմից պետության և իրավունքի տեսություն, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք, քաղաքագիտություն, համեմատական քաղաքագիտություն, ինչպես նաև կառավարման ձևին վերաբերվող դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական աշխատանքների պատրաստման համար:

Ատենախոսական հետազոտությունը կարող է օգտագործվել նաև պետության և իրավունքի, սահմանադրական, միջազգային, վարչական իրավունքի տեսության, քաղաքագիտության, պետական-իրավական մի շարք այլ գիտաճյուղերի դասավանդման ժամանակ:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը (ապրոբացիա):**

Ներկայացված մշակումները կիրառություն են գտել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015թ. Փոփոխությունների, ինչպես նաև 2017թ. Արցախի Հանրապետության Սահմանադրության նախապատրաստման ժամանակ՝ որոշակի կարգավիճակից էլնելով պաշտոնապես առաջարկներ ներկայացնելու եղանակով: Հետազոտությունների նյութերը օգտագործվել են ինչպես գործնականում, այնպես էլ գիտական համաժողովների ելույթներում, տպագրված հոդվածներում ու հրապարակումներում, դասախոսությունների ժամանակ:

## **Ատենախոսության հիմնական բովանդակությունը և կառուցվածքը:**

**Ատենախոսության կառուցվածքը:** Աշխատանքի կառուցվածքն արտացոլում է հետազոտության տրամաբանությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք մասից, վեց գլխից, որոնք ներառում են տասնվեց պարագրաֆ, եզրակացությունից, օգտագործված գրականության և նորմատիվ իրավական ակտերի ցանկից:

**Ներածության** մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի արդիականությունը, ներկայացվում են հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, նորմատիվ, փորձառնական, մեթոդոլոգիական հիմքերը, նպատակը և խնդիրները: Ձևակերպվում է հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, նշվում է ուսումնասիրության արդյունքների փորձարկումը:

*Ատենախոսության առաջին մասը՝ «Կառավարման ձև» հասկացությունը և դասակարգումը: Կառավարման կիսանախագահական ձևի տեսությունը»* վերնագրով, բաղկացած է երկու գլխից:

*Առաջին գլուխը՝ «Կառավարման ձև» հասկացությունը և դասակարգումը»* վերնագրով, բաղկացած է 5 պարագրաֆից:

*Առաջին պարագրաֆը՝ «Կառավարման ձև» հասկացությունը»* վերնագրով, նվիրված է կառավարման ձևի որպես ինստիտուտի սահմանմանն ու վերլուծությանը: Կառավարման ձևի ուսումնասիրումն ու սահմանումն ունեն թե՛ ճանաչողական, թե՛ կիրառական մեծ նշանակություն: Նշվում է, որ նման ուսումնասիրությունը ընդամենը ակադեմիական հետաքրքրություն չի ներկայացնում, այլև հնարավորություն է տալիս բացահայտել, պարզաբանել հանրային կյանքի կարգավորման համար էական նշանակություն ունեցող հետևյալ հարցերը՝ ի՞նչ կերպ են ձևավորվում հանրային իշխանությունների մարմինները, ինչպիսի՞ն է դրանցից յուրաքանչյուրի լիազորությունների ծավալը, ինչպիսի՞ն է պետական իշխանության բարձրագույն մարմինների հարաբերակցությունն ու դիրքը միմյանց նկատմամբ: Այս հարցերի պատասխաններից է առավելապես կախված նաև այն, թե պետության բուն կառավարումը և պետությունն ընդհանրապես ինչպիսի բովանդակություն կունենան:

Անդրադարձ է կատարվում «կառավարման ձև» հասկացության տարբեր սահմանումներին՝ Պլատոնի ժամանակներից մինչև մեր օրերը: Նշվում է, որ «կառավարման ձև» հասկացությունը, դրա տարատեսակները ու բովանդակությունը երբեք էլ չեն դադարելու լինել ուսումնասիրության առարկա և լինելու են այնքան ժամանակ, քանի դեռ մարդկությունը շարունակում է փնտրել կառավարման արդյունավետ ձևեր ու եղանակներ:

Ժամանակակից գրականության մեջ գոյություն չունի միասնական կարծիք «կառավարման ձև» հասկացության, դրա տեսակների ու բովանդակության վերաբերյալ: Մինչ օրս պետության և իրավունքի տեսության, սահմանադրական իրավունքի տեսության մեջ չի ձևավորվել այդ հասկացության բոլորի համար ընդունելի սահմանում: Պարզ չէ, թե հարաբերությունների որ կողմը զուտ իրավական իրավաբանորեն ամրագրված, թե փաստացի՝ իրական կյանքում գոյություն ունեցողը, պետք է հիմք ընդունել՝ կառավարման ձևերը սահմանելիս ու դրանք դասակարգելիս: Սովորաբար «կառավարման ձևը» սահմանվում է որպես պետական իշխանության բարձրագույն մարմինների ձևավորման կարգ և փոխհարաբերություններ դրանց միջև<sup>27</sup>:

<sup>27</sup> Տե՛ս, Автономов А.С. Правовая онтология политики: к построению системы категорий, М., изд. Инфограф, 1999, с 200:

Հեղինակը կարծում է, որ կառավարման ձևը հասկացությունը պետք է պատասխանի հետևյալ հարցերին.

-ինչպե՞ս է կազմավորվում գործադիր իշխանությունը, ո՞ր մարմինն է կազմավորում գործադիր իշխանությունը,

-ինչպիսի՞ կառուցվածք ունի գործադիր իշխանությունը, այն երկփեղկվա՞ծ է, դուալիստակա՞ն, ամբողջությամբ պատկանո՞ւմ է մեկ անձի կամ մեկ մարմնի,

-ինչպիսի՞ լծակներ ունի օրենսդիրը գործադիր իշխանության նկատմամբ ընդհանրապես և նրա առանձին մարմինների նկատմամբ մասնավորապես,

-ինչպիսի՞ն են պետության գլուխ - գործադիր իշխանություն - օրենսդիր իշխանություն հարաբերությունները:

Ըստ հեղինակի՝ «կառավարման ձևը» կարելի է սահմանել որպես պետական իշխանության օրենսդիր և գործադիր բարձրագույն մարմինների ձևավորման ու գործունեության ընթացքում առաջացող ֆորմալ (իրավական) և ոչ ֆորմալ (փաստացի) հարաբերությունների, բնակչության հետ դրանց փոխհարաբերության և պետության կառավարման մեջ բնակչության մասնակցության աստիճանի ամբողջություն:

Կառավարման ձևը շոշափում է պետության բարձրագույն մարմինների հարաբերությունների հիմքերը և, այդ պատճառով էլ հանդես է գալիս որպես սահմանադրական կարգավորման օբյեկտ: Այսպիսով, «կառավարման ձև» եզրույթը հնարավորություն է տալիս պարզաբանել՝ ինչպես են ստեղծվում պետության բարձրագույն մարմինները, և ինչպիսին է դրանց կազմը, ինչպես են կառուցվում փոխհարաբերությունները բարձրագույն և պետական այլ մարմինների միջև, ինչպես են կառուցվում փոխհարաբերությունները երկրի գերագույն պետական իշխանության և բնակչության միջև, որքանով է պետության բարձրագույն մարմինների կազմակերպումը թույլ տալիս ապահովել քաղաքացու իրավունքներն ու ազատությունները:

Երկրորդ պարագրաֆում՝ «Կառավարման հիմնական ձևերն ու դրանց դասակարգման չափանիշները» վերնագրով, ուսումնասիրվում են դասական և ոչ դասական կառավարման ձևերը, դրանց դասակարգման հիմքերը, չափորոշիչները և հիմնական տարբերությունները:

Առանձնացվել են այն հիմնական տարբերակիչ հատկանիշները, որոնք պետք է լինեն էական, որոշիչ, քանի որ, ըստ հեղինակի՝ ոչ էական, երկրորդական հատկանիշներով դասակարգումը ճիշտ չի արտացոլում իրական վիճակը, հետևաբար, չի կարող բավարար հիմք հանդիսանալ ուսումնասիրությունների, հետազոտությունների համար: Նշվում է, որ թե՛ իրավաբանների և թե՛ քաղաքագետների մոտ առկա են մեծ տարաձայնություններ կառավարման ձևի դասակարգման հարցում<sup>28</sup>: Կառավարման ձևերի քանակը տատանվում է երկուսից<sup>29</sup> մինչև մի քանի տասնյակների միջև: Ըստ Մ. Դյուվերժեի՝ դասակարգման կառավարման ձևերը երեքն են<sup>30</sup>, ըստ Մ.Ս. Շուգարտի, Ջ. Քերիի, Ս. Դելիի, Ա. Սիարոֆի՝ հինգն են<sup>31</sup>, ըստ Ա. Լեյփհարտի՝ ութն են<sup>32</sup>, ըստ Բ. Էլջիի՝ քսանչորս<sup>33</sup>:

<sup>28</sup> Տե՛ս Зазнаев О. И. Типология форм правления: работа над ошибками. Полис. Политические исследования. 2006. № 1. с. 92-103:

<sup>29</sup> Տե՛ս Price D.K. The Parliamentary and Presidential Systems // Public Administration Review. - 1943. - Vol. 3. - № 4. P. 317-334; Laski H.J. The Parliamentary and Presidential Systems // Public Administration Review. - 1944. - Vol. 4. - № 4. P. 347-363:

<sup>30</sup> Տե՛ս Duverger M. Institutions politiques et droit constitutionnel, tome 1, Les grands systemes politiques, 18. éd., Paris, PUF, 1990. P. 171-195:

<sup>31</sup> Տե՛ս Shugart M.S., Carey J.M. Presidents and Assemblies. Cambridge: Cambridge University Press. 1992, P. 26; Daly S. The Ladder of Abstraction: A Framework for the Systematic Classification of Democratic Regime Types // Politics. - 2003. - Vol. 23 (2), p. 104; Siaroff A. Comparative presidencies: The inadequacy of the presidential, semi-presidential and parliamentary distinction, European Journal of Political Research, Volume 42, Issue 3, May 2003, p. 287-312:



Հեղինակը կարծում է, որ ըստ կառավարման ձևի պետությունները միապետության և հանրապետության դասակարգելն՝ իր պարզությամբ հանդերձ, ունի էական բացթողում. այն չի պատասխանում կառավարման ձևի բովանդակության հարցին, դասակարգելիս հիմք է ընդունվում պետությունների բացառապես ձևական կողմը: Մեր ժամանակներում հանրապետության ու միապետության իրավահամեմատական վերլուծությունը գրեթե կորցրել է իր գիտական հետաքրքրությունը:

Ըստ հեղինակի՝ դասակարգման հիմքում պետք է դրվեն հետևյալ հարցերի պատասխանները՝ ինչպե՞ս է «ծնվում» գործադիր իշխանությունը, ո՞ր մարմինն է կազմավորում գործադիր իշխանությունը, ինչպիսի՞ կառուցվածք ունի գործադիր իշխանությունը (այն երկփեղկված է, թե ամբողջությամբ պատկանում է մեկ անձի կամ մեկ մարմնի), ինչպիսի՞ լիազորություններ ունի օրենսդիրը գործադիր իշխանության նկատմամբ ընդհանրապես և նրա առանձին մարմնի նկատմամբ մասնավորապես, ինչպիսի՞ն են պետության գլուխ-գործադիր իշխանություն-օրենսդիր իշխանություն եռանկյան հարաբերությունները:

Այս պարագրաֆում անդրադարձ կա նաև այն հարցին, թե կառավարման ձևերը դասակարգելիս հարաբերությունների որ կողմը պետք է հիմք ընդունել՝ միայն իրավական՝ սահմանադրությունում և իրավական այլ ակտերում խնդրո առարկա հանդիսացող հարաբերությունները կարգավորող իրավանորմերը, թե՞ խնդիրը պետք է վերլուծել նաև այն համատեքստում, թե իրական կյանքում այդ համակարգն ինչպես է աշխատում, ինչպիսին են այդ մարմինների փաստացի լիազորությունները, դրանց փաստացի ծավալը, բովանդակությունը, պետական իշխանության բարձրագույն մարմինների փոխհարաբերությունները:

Հեղինակն անդրադարձել է տարբեր գիտնականների դասակարգումներին՝ հին աշխարհից մինչև մեր օրերը: Նշվում է, որ մեր օրերում առավել մեծ կարևորություն է ձեռք բերում այն հարցը, թե կառավարման ո՞ր ձևերն են առավել արդյունավետ, առավել ժողովրդավարական: Կառավարման ո՞ր ձևերի պայմաններում է հասարակությունը, պետությունը զարգանում առանց ցնցումների, կառավարման ո՞ր ձևն է երաշխավորում առավել մեծ թվով քաղաքացիների մասնակցություն պետության կառավարմանը, և որի՞ պարագայում են անխուսափելի ներքին բախումներն ու ճգնաժամերը, կառավարման ո՞ր ձևն է ապահովում վերահսկելի, հակակշռվող իշխանություններ, և որի՞ պարագայում է իշխանությունը գերկենտրոնացած ու չվերահսկվող: Արվում է հետևություն, որ հանրապետությունը մնացյալ հավասար պայմաններում, կառավարման ամենաժողովրդավարական ձևն է, քանի որ ենթադրում է, որ իշխանության յուրաքանչյուր թևի, յուրաքանչյուր բարձրագույն մարմնի, ներառյալ պետության ղեկավարի, լիազորությունները, ի վերջո, հենվում են ժողովրդից ստացած մանդատի վրա: Բայց պետք է ընդգծել, որ այդ եզրահանգումը ճիշտ է միայն այլ հավասար պայմանների առկայության դեպքում:

Կառավարման հիմնական ձևերի վերաբերյալ հեղինակի կատարած դասակարգումը հանգեցնում է կառավարման ժողովրդավարական «մաքուր» երեք տեսակների առանձնացման, դրանք են՝ նախագահական (հանրապետություն), պառլամենտական (ընդ որում, քանի որ պառլամենտական միապետություններն իրենց կառավարման բովանդակությամբ էականորեն չեն տարբերվում պառլամենտական հանրապետություններից, վերջիններս կարելի է բնութագրել մեկ հաս-

<sup>32</sup> St' u Lijphart A. Patterns of democracy: Government forms and performance in thirty-six countries. New Haven: Yale univ. press, 1999, p. 119:

<sup>33</sup> St' u Elgie R. The Classification of Democratic Regime Types: Conceptual Ambiguity and Contestable Assumptions. — European Journal of Political Research, 1998.vol. 33, № 2., p. 227:

կացությամբ՝ «պառլամենտական երկրներ» կամ «կառավարման պառլամենտական ձև ունեցող երկրներ»<sup>34</sup> և կիսանախագահական:

*Երրորդ պարագրաֆում՝ «Կառավարման նախագահական ձևի բնութագրիչները, առավելություններն ու թերությունները»* վերնագրով, հեղինակը տարբեր պետությունների սահմանադրությունների և պրակտիկայի վերլուծության հիման վրա անդրադարձել է կառավարման նախագահական ձևի ծագմանն ու տարածմանը, դրա բնութագրմանը, տարատեսակներին, առավելություններին և թերություններին: Որպես կառավարման այս ձևի բնութագրիչ առանձնացվում է.

1. Հանրապետության նախագահն ընտրվում է արտապառլամենտական եղանակով, որպես կանոն՝ ուղղակի ընտրությունների միջոցով (թերևս, բացառություն է միայն ԱՄՆ-ը, որտեղ նախագահն ընտրվում է ընտրիչների կոլեգիայի միջոցով)<sup>35</sup>,

2. կառավարությունը (գործադիր իշխանությունը) ձևավորվում է արտապառլամենտական եղանակով,

3. Հանրապետության նախագահը և կառավարությունը քաղաքական պատասխանատվություն չեն կրում պետական որևէ մարմնի առջև,

4. Հանրապետության նախագահը գործադիր իշխանության ղեկավարն է,

5. Հանրապետության նախագահը, որպես կանոն, համատեղում է պետության գլխի, կառավարության ղեկավարի և գերագույն գլխավոր հրամանատարի լիազորությունները,

6. Հանրապետության նախագահը չի կարող արձակել պառլամենտը:

Կառավարման նախագահական ձևին բնորոշ է դուալիզմը, քանի որ այս կառավարման ձևի պայմաններում ժողովրդի կամքը դրսևորվում է ոչ թե մեկ, այլ երկու տարբեր ընտրություններով: Ժողովուրդն ուղղակի ընտրությունների միջոցով է ընտրում ինչպես Հանրապետության նախագահ, այնպես էլ պառլամենտ: Այս իրողությունը բերում է իշխանության գործառնության որոշակի դժվարությունների, քանի որ թե՛ հանրապետության նախագահը, թե՛ պառլամենտն օժտվում են հավասար լեգիտիմությամբ, և հարց է առաջանում, թե՛ դրանցից որը պետք է որոշի պետության քաղաքականությունը:

Որպես կառավարման նախագահական ձևի առավելություններ հեղինակն առանձնացնում է. Հաշվետվողականությունը, նույնականացվելիությունը, իշխանությունների բաժանման սկզբունքի հստակ սահմանումը, գործադիր իշխանության կայունությունը, Հանրապետության նախագահի համընդհանուր ընտրությունները:

Որպես կառավարման նախագահական ձևի թերություններ առանձնացվում են. քաղաքական ճգնաժամերից դուրս գալու ինստիտուցիոնալ ճանապարհների բացակայությունը, օրենսդիր և գործադիր իշխանություններում քաղաքական տարբեր մեծամասնության առկայության պարագայում փակուղային իրավիճակների առաջացման մեծ ռիսկը, լիազորությունների ժամկետի և երկու անգամ անընդմեջ ընտրվելու սահմանափակումները, որոնք խոչընդոտում են սոցիալական և քաղաքական հիմնարար բարեփոխումների երկարաժամկետ ծրագրերի իրականացմանը, իշխանության գերկենտրոնացումը և ավտորիտար, տոտալիտար համակարգերի հաստատման լայն հնարավորությունը: Կառավարման նախագահական ձևին բնորոշ է «հաղթողն ստանում է ամեն

<sup>34</sup> St' u Проблемы общей теории права и государства /Под ред. В.С. Нерсесянца (автор раздела VII - В.А.Четвернин). М., изд. Норма-Инфра, 1999, с. 599; Энтин Л.М. Разделение властей: опыт современных государств. М., изд. Юрид. лит., 1995, с. 25-36:

<sup>35</sup> St' u Сахаров Н.А., Институт президентства в современном мире. М., изд. Юрид. Лит., 1994, с. 33:

ինչ» սկզբունքը, ճկունության բացակայությունը, անձնակենտրոն միտումները, իշխանության տարբեր ճյուղերի միջև վեճերի լուծման ժողովրդավարական սկզբունքների բացակայությունը, քաղաքական հետնապահների խրախուսումը, քաղաքական աութսայդերների իշխանության գալու վտանգը, արբիտրաժի բացակայությունը, հակվածությունը դեպի անձնական իշխանության ռեժիմի ամրապնդում, անկայունությունը, անարդյունավետությունը:

*Չորորդ պարագրաֆում՝ «Կառավարման պառլամենտական ձևի բնութագրիչները, առավելություններն ու թերությունները»* վերնագրով, անդրադարձ է կատարվել այս ձևի բնութագրմանը, ծագմանն ու զարգացմանը, դրա տարածվածությանը, տարատեսակներին, առավելություններին և թերություններին: Հեղինակի կարծիքով՝ կառավարման պառլամենտական ձևի պարագայում պետական իշխանության իրականացման մեջ կուսակցության դերը շատ ավելի մեծ է, քան կառավարման մյուս ձևերում:

Կառավարման պառլամենտական ձևն իրենից ներկայացնում է պառլամենտի գերիշխանությամբ քաղաքական-իշխանական համակարգ: Առանձնացվում են պառլամենտական ձևի հիմնական առանձնահատուկ գծերը. կառավարության ձևավորումը պառլամենտական եղանակով, պառլամենտի առջև կառավարության քաղաքական պատասխանատվությունը, Հանրապետության նախագահի անուղղակի ընտրությունները, կոլեգիալ կառավարումը, իշխանության ապանձնավորումը:

Կառավարման պառլամենտական ձևի առավելություններից առանձնացվում է այն, որ այս ձևը լեգիտիմության տեսանկյունից ավելի մոնիստական է, ավելի ժողովրդավարական, այն իշխանությանը տալիս է ապանձնավորված բնույթ, հստակորեն տեսանելի են պետական քաղաքականության իրականացման պատասխանատուները, երկրի կառավարման համար կարևորագույն որոշումներ ընդունելու ժամանակ բնակչությունն առավել ներկայացված է, առկա են քաղաքական կոնֆլիկտները լուծելու ինստիտուցիոնալ ճանապարհներ, գործում է «հաղթողը չի ստանում է ամեն ինչ» սկզբունքը:

Միաժամանակ առանձնացվում է այս կառավարման ձևի հիմնական թերությունները՝ քաղաքական-իշխանական համակարգի կայունության ապահովման ավելի ցածր մակարդակը, իշխանությունների բաժանման հաճախ ֆորմալ բնույթ կրելը, դանդաղ կոտորությունը որոշումների ընդունման գործընթացում, հաշվետվողականության ցածր մակարդակը, ընտրողի թիկունքում կառավարության, դրա անդամների ու ղեկավարի փոփոխման հնարավորությունը, կառավարության արագ փոփոխությունը:

*Հինգերորդ պարագրաֆում՝ «Հետխորհրդային որոշ երկրների կառավարման ձևերի արատները»* վերնագրով, իրավահամեմատական մեթոդի շնորհիվ հեղինակը հանգում է այն եզրակացության, որ հետխորհրդային երկրների համար արդիական են ոչ այնքան ավտորիտարիզմից ժողովրդավարության անցնելու խնդիրները, որքան քաղաքական վարչակարգի ինստիտուցիոնալացման ու կոնսոլիդացման, այլ կերպ ասած՝ քաղաքական կայունության ու կառավարելիության հարցերը<sup>36</sup>: Վերլուծություններով վեր են հանվում թերություններ, արատներ, որոնք այլ տարածաշրջանի երկրների կառավարման ձևերին բնորոշ չեն, թեպետ արտաքուստ, սահմանադրությունների մակարդակում գուցե և ամրագրված են նույն իրավակարգավորումները: Այդ արատները, երբեմն, հասնում են այն աստիճանի, որ իրական կյանքում անձանաչելի են դարձնում կառավարման այդ ձևերը: Այս երկրներում հիշյալ թերություններին ավելանում են նաև նորերը,

<sup>36</sup> Steu, օրինակ, Борисов Н.А. Институционализация института президентства и перспективы консолидации политических режимов на постсоветском пространстве // Полития, 2011, № 4: с. 92-103:

որոնք ոչ միայն նոր «որակ» են հաղորդում դրանց, այլև խեղաթյուրում, հեռացնում են այն տրամաբանությունից, սկզբունքներից, որոնք դրված են կառավարման տվյալ ձևի հիմքում: Նախկին Խորհրդային Միության տարածքում կազմավորված պետություններում, որոշ բացառություններով, կառավարման համակարգի թերությունները կրում են համակարգային բնույթ, չեն վերանում տևական ժամանակ և դառնում են խրոնիկ<sup>37</sup>:

*Ատենախոսության առաջին մասի երկրորդ գլուխը՝ «Կառավարման կիսանախագահական ձևի տեսությունը»* վերնագրով, բաղկացած է 3 պարագրաֆից:

*Առաջին պարագրաֆում՝ «Կառավարման կիսանախագահական ձևի ծագումն ու զարգացումը»* վերնագրով, հեղինակը հիմնավորում է կառավարման կիսանախագահական ձևի ինքնուրույնությունը և նշում, որ կառավարման «մաքուր» նախագահական և «մաքուր» պառլամենտական ձևերի թերությունները շտկելու արդյունքում մի շարք երկրներում սահմանվեց իշխանության թևերի փոխհարաբերակցության այնպիսի համակարգ, որը բացառում էր այդ երկրների կառավարման «մաքուր» պառլամենտական կամ «մաքուր» նախագահական ձև ունեցող պետությունների շարքին դասելը: Ներկայացվում է կառավարման այս ձևի տեսական հիմնավորումները սկսած՝ ֆրանսիացի քաղաքագետ Մ.Դյուվերժեից մինչև մեր օրերը: Ներկայացվում է ֆրանսիացի գիտնականի ավանդը կառավարման այս ձևի ուսումնասիրության հարցում, որն առաջինն է սահմանել կառավարման այս ձևի բնութագրիչները.

- Հանրապետության նախագահն ընտրվում է համընդհանուր ընտրությունների միջոցով,

- նա օժտված է բավականին նշանակալի լիազորություններով,

- վարչապետն ու նախարարներն օժտված են գործադիր իշխանությամբ և կառավարման լիազորություններով, սակայն կարող են պաշտոնավարել այնքան ժամանակ, քանի դեռ խորհրդարանը նրանց անվստահություն չի հայտնել<sup>38</sup>:

Հեղինակի եզրահանգումը այն է, որ՝

- կառավարման կիսանախագահական ձևը կառավարման ինքնուրույն ձև է.

- կառավարման կիսանախագահական ձևն ունի իր յուրահատուկ հատկանիշները.

- կառավարման կիսանախագահական ձևում կառավարման նախագահական և պառլամենտական ձևերից փոխառնված են մի շարք ինստիտուտներ, ինչի արդյունքում կառավարման այս ձևը ձեռք է բերում որոշակի հատկանիշներ, որոնք գոյություն չունեն կառավարման ո՛չ նախագահական ո՛չ էլ պառլամենտական ձևերում:

Կառավարման դասական երկու ձևերի ցանկացած համադրում չէ, որ կառավարման տվյալ ձևը դարձնում է կիսանախագահական:

Հանրապետության նախագահի ուղղակի ընտրվելը կառավարման կիսանախագահական ձևի կարևոր, էական, բնութագրիչ հատկանիշ է, սակայն դա ինքնին բավարար չէ կառավարման այդ համակարգը կիսանախագահական համարելու համար:

Ըստ հեղինակի կիսանախագահական պետք է համարել կառավարման այն ձևը, որը չի բացառում համակեցության արդյունքում գործադիր իշխանական կենտրոնի տեղափոխումը նախագահից դեպի վարչապետ և հակառակը:

*Երկրորդ պարագրաֆում՝ «Կառավարման կիսանախագահական ձևի ենթադասակարգումը»* վերնագրով, վերլուծվել է կառավարման կիսանախագահական ձևի տարատեսակները, դրանց բնու-

<sup>37</sup> Տե՛ս Թովմայան Հ. Վ., Նախկին Խորհրդային Միության տարածքում կազմավորված պետությունների կառավարման համակարգերի հիմնական արատները: ՀՀ ՍԴ տեղեկագիր, 4/2016, էջեր 5-6:

<sup>38</sup> Տե՛ս Duverger M. A New Political System Model: Semi-Presidential Government..., էջ 166:

թագրիչները, առավելություններն ու թերությունները: Հեղինակը գտնում է, որ կառավարման կիսանախագահական ձև ունեցող պետություններում թե՛ սահմանադրությունների և թե՛ քաղաքական պրակտիկայի միջև առկա է էական շեղում: Այս երկրները մի մասը գործնականում գործում են կառավարման նախագահական ձևի խաղի կանոններով, մյուս մասը, ըստ էության, կառավարման պառլամենտական ձև ունեցող պետություններ են: Հեղինակը կատարում է կառավարման կիսանախագահական ձև ունեցող պետությունների հետևյալ ենթադասակարգումը.

- նախագահա-պառլամենտական,
- պառլամենտա-նախագահական,
- հավասարակշռված:

Հեղինակը կարծում է, որ կառավարման նախագահա-պառլամենտական ձև ունեցող պետությունների շարքին պետք է դասել այն բոլոր պետությունները, որտեղ Հանրապետության նախագահը վճռորոշ դեր ունի գործադիր իշխանության և դրա կազմավորման հարցում, կարող է ազատել վարչապետին, առկա չէ կրկնաստորագրման ինստիտուտ, Հանրապետության նախագահին է վերապահված արտաքին, ներքին կամ դրանց մի զգալի մասի քաղաքականության մշակումն ու իրականացումը:

Կառավարման պառլամենտա-նախագահական ձև ունեցող պետություններին շարքին պետք է դասել այն պետությունները, որտեղ Հանրապետության նախագահը, չնայած նրա ուղղակի ընտրություններին, չունի էական լծակներ գործադիր իշխանության կազմավորման հարցում. Հանրապետության նախագահի հիմնական ակտերը ենթակա են կրկնաստորագրման, վերջինս չունի վարչապետին ազատելու դիսկրեցիոն լիազորություն, Հանրապետության նախագահը ունի կարևոր դերակատարում հատկապես արտաքին քաղաքականության մշակման բնագավառում, բայց նաև ներքինում:

Կառավարման հավասարակշռված ձև ունեցող երկրների շարքին պետք է դասել այն երկրները, որտեղ, սահմանադրորեն ամրագրված դրույթների համաձայն, Հանրապետության նախագահը և պառլամենտն իրական մրցակիցներ են կառավարության ձևավորման հարցում: Հանրապետության նախագահն ունի գործադիր իշխանությունում բավարար ազդեցիկ լիազորություններ, որոնք կարող է իրականացնել անկախ կառավարությունից, որտեղ Հանրապետության նախագահի և կառավարության լիազորությունները տարանջատված են, որտեղ կրկնաստորագրման են ենթակա Հանրապետության նախագահի ակտերի միայն մի մասը:

*Երրորդ պարագրաֆում՝ «Կառավարման կիսանախագահական ձևը արդյո՞ք վերացնում է կառավարման նախագահական և պառլամենտական ձևերի թերությունները»* վերնագրով, հեղինակը անդրադառնում է այն ուսումնասիրություններին որոնցում հիմնավորվում է, որ կառավարման կիսանախագահական ձևը, կառավարման դասական երկու ձևերի հիմնական առավելությունները վերցրած և թերություններից զերծ կառավարման մի ձև է: Տարբեր դիտարկումների արդյունքում, հեղինակը կառավարման նախագահական և պառլամենտական ձևերի թերություններին անդրադառնալով, ցույց է տալիս, որ այդ թերությունները ամբողջությամբ կամ մասամբ առկա են նաև կառավարման կիսանախագահական ձևում, երբեմն առավել արտահայտված: Հերքվում է այն պնդումը, որ կառավարման կիսանախագահական ձևը միավորում է երկու դասական կառավարման ձևերի ուժեղ կողմերը և զերծ է վերջիններիս թերություններից:

Այն կարծիքը, որ կառավարման կիսանախագահական ձևը լուծումներ ունի երկու հիմնական այն խնդիրների համար (գործադիր և օրենսդիր իշխանությունների հակամարտությամբ պայմանավորված փակուղի և կառավարման նախագահական ձևի կարծրություն), որոնք առաջանում են

կառավարման նախագահական ձևն ընտրած զգալի թվով երկրներում, և մեղմում է կառավարման պառլամենտական ձևին բնորոշ կառավարությունների անկայունությունը, կարող է ճշմարտացի լինել սուսկ որպես կառավարման կիսանախագահական ձևի ֆրանսիական մոդելի կիրառմանը նվիրված ուսումնասիրությունների հետևություն: Այլ դեպքերում՝ կառավարման կիսանախագահական ձևը ոչ միայն կրկնում է կառավարման մյուս ձևերի հիմնական թերությունները, այլև ավելացնում է միայն իրեն բնորոշ նոր թերություններ:

*Ատենախոսության երկրորդ մասը՝ «Կառավարման ձևի էվոլյուցիան Հայաստանի Հանրապետությունում 1995-2005 թթ.», բաղկացած է երկու գլխից:*

*Առաջին գլուխը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարման ձևը 1995 թվականի հուլիսի 5-ի Սահմանադրությամբ» վերնագրով, բաղկացած է երկու պարագրաֆից:*

*Առաջին պարագրաֆում՝ «Կառավարման կիսանախագահական ձևի ամրագրման նախապատմությունը և դրա ձևախեղումը Հայաստանի Հանրապետության 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրությունում» հեղինակն անդրադարձել է Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությամբ ամրագրված Հայաստանի Հանրապետության կառավարման ձևին, դրա սահմանման նախապատմությանը, կառավարման այդ ձևի ընտրության օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերին, դրդապատճառներին, նպատակներին: Իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ, ցույց են տրվել Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի կառավարման ձևերի տարբերություններին, ինչպես նաև՝ կառավարման դասական կիսանախագահական ձևից հիմնական շեղումները:*

Ըստ պաշտպանվող տեսակետի՝ Հանրապետության նախագահի իշխանությունը շատ ավելի մեծ էր, քան Ֆրանսիայի Հանրապետության նախագահինը, և այդ տարբերությունը հատկապես ցայտուն է քաղաքական պրակտիկայում: Երկու երկրների քաղաքական մշակույթների և կուսակցական համակարգերի հսկայական տարբերությունն ավելի էր մեծացնում այդ հեռավորությունը: Այնտեղ, որտեղ օրենսդիր մարմինը պառակտված է, կոալիցիոն կառավարությունը՝ թույլ, իսկ դատական համակարգը՝ չկայացած, նույնիսկ ոչ մեծ լիազորություններ ունեցող Հանրապետության նախագահը կարող է որոշիչ դեր ունենալ իրադարձությունների զարգացման վրա<sup>39</sup>:

Շեղինակը կարծում է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և քաղաքական պրակտիկան արտացոլում էին կառավարման այս ձևերի արատների ամբողջ «հովհարը»:

Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի համեմատությունը նախկին սոցիալիստական բլոկի երկրների հետ ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության նախագահի սահմանադրական դիրքն ամենաուժեղներից էր:

Ակնհայտ է, որ կառավարման այս ձևի պայմաններում չէր կարող խոսք լինել արդյունավետ զսպումների և հակակշիռների մասին: Ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Շ. Հարությունյանը, առանց հակակշիռների ու զսպումների համակարգի իշխանությունը դառնում է կողմնակալ, իսկ հետո նաև ավտորիտար<sup>40</sup>:

Հանրապետության նախագահի իրավասությունները ռեալ կյանքում նույնիսկ ավելին էին, քան դրանք ամրագրված են Սահմանադրությունում. քանի որ Ազգային ժողովը քաղաքականապես բավականին թուլ էր և կախյալ Հանրապետության նախագահից, ուստի չէր կարող իրական հակակշիռ լինել Հանրապետության նախագահին:

<sup>39</sup> Տե՛ս Остром В. Смысл американского федерализма М., изд. Арена, 1993:

<sup>40</sup> Տե՛ս Арутюнян А. А. Конституционализм: проблемы постсоветской реальности: монография / А.А. Арутюнян. М., изд. НОРМА, 2013. с. 102.

*Երկրորդ պարագրաֆում՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակը և լիազորություններն ըստ 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրության»,* հեղինակն անդրադարձել է կառավարման ձևի բնութագրման համար կարևոր նշանակություն ունեցող Ազգային ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակին: Հեղինակը գտնում, որ չնայած Սահմանադրությամբ ամրագրված մի շարք նոր ինստիտուտներին և իրավակարգավորումներին, դրանք բավարար չէին պետական կառավարմանը Ազգային ժողովի արդյունավետ մասնակցելու, պետական այլ մարմինների ձևավորման հարցում դերակատարություն ունենալու, Հանրապետության նախագահի լայն լիազորություններին հակակշռելու համար: Սահմանադրությամբ անտեսված էին քաղաքական փոքրամասնության իրավունքները: Ամփոփելով հեղինակը եզրակացնում է, որ չնայած Ազգային ժողովի օրենսդրական սուվերենությանը, հատկապես՝ օրենսդրական գործընթացի սահմանափակումներին, կառավարության հանդեպ պառլամենտական վերահսկողության որոշակի տարրերի առկայությանը, Հայաստանի Հանրապետությունում ընդունված կառավարման ձևը ուղղակիորեն հարցականի տակ էր դնում փոխադարձ զսպումների և հակակշիռների մեխանիզմները: Նման կառավարման ձևը առավել վտանգավոր էր Հայաստանի Հանրապետության համար, որը չուներ ժողովրդավարության ավանդույթներ, քաղաքացիական ուժեղ հասարակություն, չգրված արգելքներ ու սկզբունքներ:

*Երկրորդ մասի 2-րդ գլուխը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարման ձևն ըստ 2005 թ. Սահմանադրական փոփոխությունների (նախագահա-պառլամենտական մոդելից անցում պառլամենտա-նախագահական մոդելի)»,* բաղկացած է երկու պարագրաֆից:

*Առաջին պարագրաֆում՝ «Հայաստանի Հանրապետության 2005թ. սահմանադրական փոփոխությունները կառավարության կազմավորման և վարչապետին ազատելու հարցերում»* վերնագրով, վերլուծվում են կառավարման ձևի թե՛ բնութագրման և թե՛ բովանդակության համար կարևոր նշանակություն ունեցող կառավարության կազմավորման և վարչապետին ազատելու հետ կապված իրավակարգավորումները՝ Հայաստանի Հանրապետության 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ: Հեղինակը կարծում է, որ կառավարման հավասարակշռված կիսանախագահական ձև ունեցող պետություններում Հանրապետության նախագահը որպես կանոն օժտված է լինում այնպիսի լիազորություններով, որոնք նրան հնարավորություն են տալիս կառավարության կազմավորման հարցի շուրջ մրցակցության մեջ մտնել խորհրդարանի հետ, դիմադրել «կուսակցա-կառավարական» իշխանությանը:

Հեղինակը կարծում է, որ երբ կառավարության կազմավորման հարցում պառլամենտական մեծամասնության դերակատարությունը դառնում է նոմինալ կամ որտեղ պառլամենտը չի ունենում կառավարության կազմավորման հարցում Հանրապետության նախագահի հետ մրցակցելու բավարար լիազորություններ, ապա պետք է արձանագրել կառավարման համակարգի շեղումը կիսանախագահական դասական համակարգից:

2005թ. սահմանադրական փոփոխությունները, ըստ էության, կիսալուծումներ էին, որոնք բավարար չէին կառավարության ձևավորման հարցում Հանրապետության նախագահի գերակա դիրքը փոքր-ինչ մեղմելու համար: Հետագա գործընթացները ևս հաստատեցին, որ սահմանադրական այդ բարեփոխումներն երկրի քաղաքական կյանքում էական, նկատելի որևէ փոփոխություն չմտցրին:

*Երկրորդ պարագրաֆում՝ «Հայաստանի Հանրապետության 2005թ. սահմանադրական փոփոխությունները Հանրապետության նախագահի գործառույթների և լիազորությունների հարցում»* վերնագրով, հեղինակն անդրադառնում է 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով Հանրապետության նախագահի կարգավիճակի, գործառույթների և լիազորությունների

փոփոխությանը: Պաշտպանվում է այն տեսակետը, որ այդ փոփոխությունների նպատակը առավել հավասարակշռված իշխանություն ունենալն էր, առաջին հերթին Հանրապետության նախագահի լիազորությունները կրճատելու եղանակով: Հեղինակը գտնում է որ սահմանադրական փոփոխությունները էական էին՝ ի հոգուտ Ազգային ժողովի և կառավարության, Հանրապետության նախագահի լիազորությունների կրճատման առումով: Սակայն ոչ սահմանադրական գործոնների արդյունքում իրական հարթության մեջ Հանրապետության նախագահի լիազորությունները հետագա տարիներին բովանդակային փոփոխությունների չենթարկվեցին: Սահմանադրության փոփոխությունները հստակություն չմտցրեցին Հանրապետության նախագահի կարգավիճակ-գործառույթներ-լիազորություններ հասկացությունների ծավալների բովանդակության ու դրանց փոխհարաբերության մեջ:

Ամփոփելով հեղինակը կարծում է, որ 2005թ. սահմանադրական փոփոխություններով՝  
-իրարից չտարանջատվեցին Հանրապետության նախագահի գործառույթներն ու լիազորությունները,

-Հանրապետության նախագահի համար՝ որպես Սահմանադրության երաշխավորի, որևէ պատասխանատվություն չսահմանվեց Սահմանադրության կոպիտ կամ դիտավորյալ խախտման դեպքում,

-արտաքին քաղաքականության և պաշտպանության բնագավառներում չնախատեսվեց կրկնաստորագրման ինստիտուտը, ինչի հետևանքով այդ ոլորտներում կարող է վտանգվել միասնական քաղաքականության իրականացումը: Հանրապետության նախագահը պահպանեց իր իրավունքը՝ առանց կրկնաստորագրման նշանակումներ կատարելու տարբեր պաշտոններում,

-Հանրապետության նախագահը, ունենալով մարզպետներ նշանակելու և ազատելու մասին կառավարության որոշումները վավերացնելու լիազորություն, կարող էր խոչընդոտել կառավարության կողմից միասնական ներքին քաղաքականության իրականացմանը:

*Ատենախոսության երրորդ մասը՝ «Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հրաժարվելը կառավարման կիսանախագահական ձևից»* վերնագրով, բաղկացած է երկու գլխից:

*Առաջին գլուխը՝ «Հայաստանի Հանրապետությունում կառավարման կիսանախագահական ձևի ավարտը»* վերնագրով, բաղկացած է երկու պարագրաֆից:

*Առաջին պարագրաֆում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի հնարավոր բարեփոխումները կառավարման կիսանախագահական ձևի շրջանակներում»*, ուսումնասիրվում է այն հարցը, թե արդյո՞ք Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի հիմնական թերությունները հնարավոր էին շտկել՝ մնալով կառավարման կիսանախագահական ձևի շրջանակներում: Ատենախոսը անդրադարձել է այս հարցի քննարկմանը սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովում, վերլուծել այն առաջարկները և հնարավոր տարբերակները, որոնք առկա են եղել թե՛ սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովում, թե՛ դրանից դուրս: Մեկ անգամ ևս անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության կառավարման ձևի խնդիրներին, դրանցից առանձնացվել են գործադիր իշխանության գերկենտրոնացումը Հանրապետության նախագահի ձեռքում, «համակեցություն» հնարավորությունը, գործադիր իշխանության երկբևեռությունը, Հանրապետության նախագահի քաղաքական պատասխանատվության ինստիտուտի բացակայությունը, քաղաքական երկու ընտրությունների անհրաժեշտությունը, քաղաքական ատթուսայ-դերների ընտրության վտանգը, չեզոք, վերկուսակցական Հանրապետության նախագահի ինստիտուտի բացակայությունը:



Հեղինակն համաձայնում է սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում տեղ գտած այն մոտեցմանը, որ կառավարման կիսանախագահական ձևի ցանկացած տարատեսակի պարագայում հնարավոր չէ տալ բոլոր խնդիրների համալիր լուծում, մասնավորապես՝ հետևյալ պատճառներով.

-Հանրապետության նախագահի ու Ազգային ժողովի ոչ միաժամանակյա ընտրությունների պարագայում առաջնային մանդատ ունեցող երկու ինստիտուտները հայտնվում են հանրային վստահության տարբեր մակարդակներում, և խորհրդարանում Հանրապետության նախագահին հարող մեծամասնության բացակայության պայմաններում ու իրավամտածողության ներկա դրսևորումների համատեքստում էապես մեծանում է քաղաքական ճգնաժամի ու առճակատման վտանգը,

-Ազգային ժողովում Հանրապետության նախագահի բացարձակ մեծամասնության առկայության և ներպառլամենտական հակակշիռների բացակայության պայմաններում մեծանում է քաղաքական մենիշխանության վտանգը,

-Հանրապետության նախագահի գործառույթների ու լիազորությունների միջև ապահովված չէ անհրաժեշտ համամասնականություն,

-առկա է անհստակություն գործադիր իշխանության գործառույթային դերի, իրավասության և պատասխանատվության միջև<sup>41</sup>:

Արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարման կիսանախագահական ձևի և, ընդհանրապես, կառավարման կիսանախագահական ձևի արատները կառավարման կիսանախագահական ձևի շրջանակներում հնարավոր չէ լուծել՝ առանց դրա էության խեղաթյուրման:

*Երկրորդ պարագրաֆում՝ «Հայաստանի Հանրապետության անցումը կառավարման պառլամենտական ձևին»* վերնագրով, արձանագրվում են կառավարման կիսանախագահական ձևի հիմնական թերությունները և այն խնդիրները, որոնք պետության քաղաքական կյանքում կարող են առաջանալ: Դրանք հնարավոր չէ կանխել առանց կառավարման ձևի փոփոխման: Գործադիր իշխանության համակարգային ամբողջականությունը կարելի է ապահովել, իսկ քաղաքական մենիշխանությունից, պետական իշխանության գերանձնավորումից, համակեցության առաջացումից հնարավոր է արդյունավետ խուսափել կառավարման պառլամենտական ձևի պայմաններում: Հեղինակը չի ժխտում, որ կառավարման պառլամենտական ձևին անցումն ուներ իր բարդությունները: Նա այն կարծիքին է, որ կառավարման պառլամենտական ձևն արդյունավետ է գործում զարգացած, նշանակալիորեն ինքնակարգավորվող տնտեսությամբ և կայուն քաղաքական կառուցվածքով ու կայացած կուսակցություններ ունեցող պետություններում: Մյուս կողմից՝ վերջիններիս գրեթե անհնար է հասնել կառավարման կիսանախագահական ձևի պայմաններում:

Այս պարագրաֆում նաև անդրադարձ կա կառավարման մոդեռնիզացված պառլամենտական ձևի պայմաններում՝ կայուն խորհրդարանական մեծամասնության, կոնստրուկտիվ անվստահության, պառլամենտական փոքրամասնության, պետական մարմինների ձևավորման հարցում Ազգային ժողովի դերակատարության հետ կապված հարաբերությունների կարգավորմանը:

Հեղինակը համակարծիք է Տ. Թորոսյանի հետ, որ 2015թ. սահմանադրական փոփոխությունները և հատկապես կառավարման ձևի տրանսֆորմացիան՝ իրենց քաղաքական նշանակությամբ,

<sup>41</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Եր., Տիգրան մեծ, 2014., էջեր 43-44:

դրանց հետագա արդյունավետ իրացման պարագայում, կարող են ճանաչվել որպես ամենաարմատական քայլ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարացման գործընթացում<sup>42</sup>:

Այնուամենայնիվ պետք է համաձայնել պրոֆեսոր Կ. Տորիի հետ, որ ժողովրդավարությունը հնարավոր չէ ապահովել միայն սահմանադրական դիզայնով և հնարավոր չէ գնահատել միայն սահմանադրական նորմերով<sup>43</sup>:

Այսպիսով, 2015թ. սահմանադրական փոփոխությունները արմատական էին, որոնցով Հայաստանի Հանրապետությունը հրաժեշտ տվեց կառավարման կիսանախագահական ձևին:

*Երրորդ մասի երկրորդ գլուխը՝ «Արցախի Հանրապետության կառավարման ձևի բարեփոխումները» վերնագրով*, բաղկացած է երկու պարագրաֆից:

*Առաջին պարագրաֆում՝ «Արցախի Հանրապետության առաջին Սահմանադրության ընդունումը, կառավարման ձևի թերությունները, կառավարման ձևի բարեփոխման հնարավոր ուղիները»* վերնագրով, անդրադարձ է կատարվում Արցախի Հանրապետության 2006 թվականի սահմանադրությամբ ամրագրված կառավարման ձևին, դրա նախապատմությունը, թերություններին, առավելություններին:

Այստեղ ևս անդրադարձ կա Հանրապետության նախագահի գերիշխող և չհավասարակշռվող դերին պետական մարմինների համակարգում, որը դրսևորվում էր բոլոր այլ մարմինների հետ հարաբերություններում: Արցախի Հանրապետությունում Հանրապետության նախագահը, փաստացի լինելով գործադիր իշխանության ղեկավարը, որոշում էր պետության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությունը, սակայն ընթացիկ քաղաքական համար որևէ պատասխանատվություն չէր կրում:

Նշվում է, որ Ազգային ժողովը չէր կարող իրական հակակշիռ լինել Հանրապետության նախագահին, քանի որ վերջինիս հակադրվելու պարագայում կարող էր արձակվել վարչապետի պաշտոնանկության և նոր կառավարության ձևավորման ընթացակարգի արդյունքում:

Հայաստանի Հանրապետության կառավարման ձևին բնորոշ գրեթե բոլոր թերություններն առկա էին նաև Արցախի Հանրապետությունում, և դրանք կառավարման կիսանախագահական ձևի պայմաններում հնարավոր չէին ամբողջությամբ լուծել:

Արցախի Հանրապետության առանձնահատկությունների հաշվառմամբ՝ հիմնավորվում է նաև կառավարման պառլամենտական ձևին անցնելու հնարավոր բացասական հետևանքներն ու օբյեկտիվ այն պատճառները, որոնք բարդացնում են դրանց լուծումը: Հեղինակը կարծում է, որ կառավարման պառլամենտական ձևը, որոշ առումով լուծելով կառավարման կիսանախագահական ձևի խնդիրները, մասնավորապես՝ գործադիր իշխանության միասնականության ապահովման, համակեցության բացառման առումով, միաժամանակ բերում է նոր խնդիր, այն է՝ կառավարության անկայունությունը:

*Երկրորդ պարագրաֆում՝ «Արցախի Հանրապետության անցումը կառավարման մոդեռնիզացված նախագահական ձևին 2017թ. Սահմանադրությամբ»* վերնագրով, հեղինակը, անդրադառնալով Արցախի Հանրապետության առանձնահատկություններին, գտնում է, որ Արցախի Հանրապետության առջև ծառայած մարտահրավերները պահանջում են ուժեղ և միասնական գործադիր իշխանություն, որն ի վիճակի կլինի ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական

<sup>42</sup> Տե՛ս Торосян Т. Перспективы и вызовы перехода Армении к системе парламентского правления. Сравнительное конституционное обозрение, N 4 (113), 2016, с. 32:

<sup>43</sup> Tuori K. Constitutional Design and the Choice of the Political Regime // Armenian Journal of Political Science. 2015, N 2, էջեր 5-14:

պայմաններում համախմբել պետության բոլոր ռեսուրսները և օպերատիվ արձագանքել ստեղծված իրավիճակի պահանջներին:

Ըստ հեղինակի՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությունը չէր երաշխավորում գործադիր իշխանության միասնականությունն այնպիսի մի պետության համար, որը փաստորեն ապրում է դրսից իրեն պարտադրված արտակարգ դրության պայմաններում, և որտեղ կառավարման համակարգի ճկունությունն ու որոշումների կայացման և իրագործման օպերատիվությունն առանձնակի կարևորություն են ստանում: Սրանից բխում է, որ կառավարման ձևի հիմքում պետք է դրված լինի գործադիր իշխանության միասնականությունը և կառավարման համակարգի ճկունությունը: Նման հնարավորություն ընձեռում է կառավարման մոդեռնիզացված նախագահական ձևը:

Հիմնավոր է համարվում Արցախի Հանրապետության կառավարման ձևի հիմքում հետևյալ սկզբունքային դրույթների ամրագրումը.

1. Հանրապետության նախագահը գործադիր իշխանության ղեկավարն է,
2. Հանրապետության նախագահն ուղղակիորեն ընտրվում է ժողովրդի կողմից,
3. Հանրապետության նախագահն արտապառլամենտական եղանակով ձևավորում է գործադիր իշխանությունը և հանդիսանում է գործադիր իշխանության ղեկավարը,
4. Հանրապետության նախագահը, որպես գործադիր իշխանության ղեկավար, ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև,
5. Հանրապետության նախագահը կարող է արձակել Ազգային ժողովը,
6. Հանրապետության նախագահին անվստահություն հայտնելու, ինչպես նաև Ազգային ժողովն արձակելու պարագայում միաժամանակ անցկացվում են Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի ընտրություններ:

Հեղինակը համեմատական վերլուծության արդյունքում հիմնավորում է Արցախի Հանրապետության կառավարման ձևի առավելությունները կառավարման դասական նախագահական ձևի համեմատ:

**Եզրակացության** մեջ Հայաստանի Հանրապետությունում կառավարման կիսանախագահական ձևի հիմնախնդիրների վերաբերյալ կատարված ուսումնասիրության արդյունքում արվել են հետևյալ եզրահանգումները.

1. Իրավաբանական գիտական գրականության մեջ գոյություն չունի ընդհանուր տեսակետ «կառավարման ձև» հասկացության սահմանման վերաբերյալ: Սովորաբար «կառավարման ձևը» բնորոշվում է որպես պետական իշխանության բարձրագույն մարմինների ձևավորման կարգը և դրանց միջև առկա փոխհարաբերությունները: Կառավարման ձևը կարելի է սահմանել նաև որպես պետական իշխանության բարձրագույն օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորման ու գործունեության ընթացքում առաջացող ֆորմալ (իրավական) և ոչ ֆորմալ (փաստացի) հարաբերությունների, բնակչության հետ դրանց փոխհարաբերության և պետության կառավարման ոլորտում բնակչության մասնակցության աստիճանի ամբողջություն:

2. Մասնագետները միակարծիք են, որ աշխարհում չկան կառավարման կատարյալ ձևեր, դրանցից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները:

3. Պետությունների կողմից կառավարման ձևի ընտրությունը, որպես կանոն, պայմանավորված է լինում երկրի պատմական զարգացման պայմաններով, տնտեսական վիճակով, սոցիալ-մշակութային, քաղաքական ավանդույթներով և գործընթացներով:

4. Այսօր առավել մեծ կարևորություն են ձեռք բերում հետևյալ հարցերը. կառավարման ո՞ր ձևերն են առավել արդյունավետ, առավել ժողովրդավարական, կառավարման ո՞ր ձևերի պայմաններում է հասարակությունը, պետությունը զարգանում առանց ցնցումների, կառավարման ո՞ր ձևն է երաշխավորում առավել մեծ թվով քաղաքացիների մասնակցություն պետության կառավարմանը, որի պարագայում են անխուսափելի ներքին բախումներն ու ճգնաժամերը, կառավարման ո՞ր ձևն է երաշխավորում վերահսկելի, հակակշռվող իշխանություններ և որի պարագայում է իշխանությունը գերկենտրոնացած ու չվերահսկվող:

5. Կառավարման թե՛ նախագահական, թե՛ պառլամենտական և թե՛ կիսանախագահական ձևերն ունեն ժողովրդավարական պետություն ստեղծելու ներուժ:

6. Կառավարման նախագահական ձևը դասական երեք կառավարման ձևերից այսօր ամենատարածվածն է, այս ձևը գործում է իշխանությունների բաժանման խիստ համակարգի հիման վրա:

Կառավարման նախագահական ձևը ենթադրում է այնպիսի համակարգի ստեղծում, որի ժամանակ իշխանության երկու թևերը՝ օրենսդիրը և գործադիրը, գործում են իրարից անկախ, սակայն հնարավորություն ունեն զսպելու մյուս կողմի իշխանության զավթման կամ գերկենտրոնացման հնարավորությունը:

Կառավարման նախագահական ձևի առավելությունների թվին կարելի է դասել իշխանությունների բաժանման սկզբունքի հստակ սահմանումը, գործադիր իշխանության կայունությունը և հաշվետվողականությունը, գործադիր իշխանության ղեկավարի ուղղակի ընտրությունները: Կառավարման այս ձևի պարագայում իշխանությունն առավել քան անձնավորված է, այն ասոցացվում է կոնկրետ անձի հետ:

Որպես կառավարման նախագահական ձևի թերություններ կարելի է առանձնացնել քաղաքական ճգնաժամերից դուրս գալու ինստիտուցիոնալ ճանապարհների բացակայությունը, օրենսդիր և գործադիր իշխանություններում քաղաքական տարբեր մեծամասնության առկայության պարագայում փակուղային իրավիճակների առաջացման մեծ ռիսկը, լիազորությունների ժամկետի սահմանափակումները, ճկունության բացակայությունը, անձնակենտրոն միտումները, պետության գլխի կողմից արբիտրաժի բացակայությունը: Կառավարման նախագահական ձևին բնորոշ է «հաղթողը ստանում է ամեն ինչ» սկզբունքը («խաղ՝ զրոյական արդյունքով»):

7. Կառավարման պառլամենտական ձևը իրենից ներկայացնում է քաղաքական-իշխանական այնպիսի համակարգ, որտեղ պառլամենտը վճռորոշ ազդեցություն ունի գործադիր իշխանության ճակատագրի վրա:

Կառավարման պառլամենտական ձևի հիմնական բնութագրիչը պառլամենտի առաջ կառավարության քաղաքական պատասխանատվությունն է: Կառավարման այս ձևը համարվում է ավելի ժողովրդավարական, քան կառավարման մյուս ձևերը:

Կառավարման պառլամենտական ձևի առավելություններից է իշխանության հիմնական մասի կենտրոնացված լինելը մեկ մարմնի՝ գլխավորապես պառլամենտի ձեռքում, ինչպես նաև իշխանության ապանձնավորված բնույթը: Ի տարբերություն կառավարման նախագահական ձևի՝ կառավարման պառլամենտական ձևը չի գործում «հաղթողը ստանում է ամեն ինչ» սկզբունքով:

Որպես կառավարման պառլամենտական ձևի թերություն կարելի է առանձնացնել գործադիր իշխանության կայունության ապահովման ավելի ցածր մակարդակը, իշխանությունների դասական բաժանման հաճախ ֆորմալ բնույթը:

8. Հետխորհրդային պետությունների կառավարման ձևերի վերլուծությունը վեր է հանում թերություններ, որոնք այլ տարածաշրջանի երկրների կառավարման ձևերին բնորոշ չեն, թեպետ արտաքուստ, սահմանադրությունների մակարդակում հիմնականում ամրագրված են նույն իրավակարգավորումները:

Հետխորհրդային պետություններում թերությունները երբեմն հասնում են այն աստիճանի, որ իրական կյանքում անճանաչելի են դարձնում կառավարման համապատասխան ձևերը:

Այս երկրներում հիշյալ թերություններին ավելանում են նաև նորերը, որոնք ոչ միայն նոր «որակ» են հաղորդում դրանց, այլև խեղաթյուրում, հեռացնում են այն տրամաբանությունից, սկզբունքներից, որոնք դրված են կառավարման տվյալ ձևի հիմքում:

Հետխորհրդային պետություններում, որոշ բացառություններով, կառավարման ձևի թերությունները կրում են համակարգային բնույթ, չեն վերանում տևական ժամանակ և դառնում են խրոնիկ:

9. Կառավարման կիսանախագահական ձևը կառավարման ինքնուրույն ձև է: Կառավարման կիսանախագահական ձևում Հանրապետության նախագահը, ընտրվում է համընդհանուր ընտրությունների միջոցով, օժտված է քաղաքական նշանակալի իրավասություններով և որոշակի համամասնությամբ կիսում է գործադիր իշխանությունը խորհրդարանի առջև պատասխանատու կառավարության հետ:

10. Կառավարման կիսանախագահական ձևում կառավարման նախագահական և պառլամենտական ձևերից փոխառնված են մի շարք ինստիտուտներ, որոնց համադրման արդյունքում կառավարման այս ձևը ձեռք է բերում որոշակի հատկանիշներ, որոնք գոյություն չունեն կառավարման ո՛չ նախագահական և ո՛չ էլ պառլամենտական ձևերում:

11. Կառավարման կիսանախագահական ձևի բնութագրիչ պետք է համարել «համակեցության» արդյունքում գործադիր իշխանական կենտրոնի հնարավոր տեղափոխումը Հանրապետության նախագահից դեպի վարչապետ և հակառակը:

12. Կառավարման կիսանախագահական ձևը ենթադասակարգվում է նախագահապառլամենտականի և պառլամենտա-նախագահականի: Առաջին խմբում պետք է դասել այն բոլոր պետություններին, որտեղ Հանրապետության նախագահը վճռորոշ դեր ունի գործադիր իշխանության և դրա կազմավորման հարցում, կարող է ազատել վարչապետին, առկա չէ կրկնաստորագրման ինստիտուտ, Հանրապետության նախագահին է վերապահված արտաքին ու ներքին քաղաքականության կամ դրանց մի զգալի մասի մշակումն ու իրականացումը: Երկրորդ խմբին են պատկանում այն երկրները, որտեղ, չնայած Հանրապետության նախագահի ուղղակի ընտրություններին, նա էական լծակներ չունի գործադիր իշխանության կազմավորման հարցում. Հանրապետության նախագահի հիմնական ակտերը ենթակա են կրկնաստորագրման, Հանրապետության նախագահը չունի վարչապետին ազատելու դիսկրեցիոն լիազորություն, երկրի ներքին ու արտաքին քաղաքականության մշակումը և իրականացումը հիմնականում վերապահված է կառավարությանը:

13. Որպես կառավարման կիսանախագահական ձևի առավելություն հաճախ մատնանշվում է այն հանգամանքը, որ այս կառավարման ձևը լուծում է կառավարման նախագահական ձևին ներհատուկ երկու հիմնական թերությունները՝ գործադիր և օրենսդիր իշխանությունների հակամարտությամբ պայմանավորված փակուղային իրավիճակները և կառավարման նախագահական ձևի կարծրությունը: Նշված մոտեցման կողմնակիցների կարծիքով կառավարման կիսանախագահական ձևը նաև մեղմում է կառավարման պառլամենտական ձևին բնորոշ գործադիր իշխանու-

թյան անկայունությունը: Նշված տեսակետները կարող են ճշմարտացի լինել միայն կառավարման կիսանախագահական ձևի ֆրանսիական մոդելի վերաբերյալ, այն էլ՝ մեծ վերապահումներով: Մոտեցումը, համաձայն որի կառավարման պառլամենտական ու նախագահական ձևերի լավագույն գծերը հնարավոր է համադրել կառավարման կիսանախագահական ձևում, հիմնավոր չէ: Նման համադրումն արհեստական է:

14. Իրական կյանքում, կառավարման կիսանախագահական ձևը գտնվում է կա՛մ նախագահական, կա՛մ պառլամենտական փուլում, և դրանցից յուրաքանչյուրը առաջացնում է մի շարք խնդիրներ, որոնք բնորոշ են ոչ միայն կառավարման նախագահական և պառլամենտական ձևերին, այլև առաջացնում են նորերը:

15. Կառավարման կիսանախագահական ձևի խնդիրները սահմանադրաիրավական արմատական լուծում չունեն, քանի որ առաջին հերթին պայմանավորված են քաղաքական և ոչ թե իրավական գործոններով (պառլամենտական մեծամասնության առկայություն և դրա ենթակայություն Հանրապետության նախագահին):

16. Կառավարման կիսանախագահական ձևի պարագայում բացակայում է չեզոք, վերկուսակցական Հանրապետության նախագահի ինստիտուտը: Եթե Հանրապետության նախագահը գործադիր իշխանության փաստացի ղեկավարն է, ապա նա չի կարող ունենալ չեզոք, վերկուսակցական արբիտրի դեր:

17. Հայաստանի Հանրապետության կառավարման կիսանախագահական ձևի բարեփոխումը կարող էր ընթանալ գործադիր իշխանության բնագավառում Հանրապետության նախագահի և կառավարության միջև (հատկապես արտաքին քաղաքականության, պաշտպանության և ազգային անվտանգության բնագավառներում) կոնկրետ լիազորությունների սահմանադրաիրավական ավելի հստակ սահմանազատման ճանապարհով: Նման փոփոխությունները թեև կարևոր են, բայց գործնականում քիչ բան կփոխեն, եթե գործադիր իշխանության ներսում, այնուհանդերձ, լինի դոմինանտ ֆիզուր (դա լինի Հանրապետության նախագահը թե վարչապետը):

18. Հայաստանի Հանրապետության կառավարման կիսանախագահական ձևի և ընդհանրապես կառավարման կիսանախագահական ձևի արատները կառավարման կիսանախագահական ձևի շրջանակներում հնարավոր չէ լուծել առանց դրա էության խեղաթյուրման:

19. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական փոխակերպումների իրականացումը հենց սկզբից պահանջել է կառուցել կառավարման արդյունավետ համակարգ պետական իշխանության բոլոր մակարդակներում: Ինչպես ցանկացած պետության, այնպես էլ Հայաստանի Հանրապետության համար կառավարման ձևի ընտրության չափորոշիչը, առաջին հերթին, արդյունավետությունն է: A priori ամենաարդյունավետը կառավարման այն ձևն է, որը պատմական կոնկրետ պայմաններում կարող է լավագույնս ապահովել պետության իշխանության բարձրագույն մարմինների համաձայնեցված գործունեությունը և միմյանց նկատմամբ վերահսկողությունը:

20. Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի բարեփոխման գործընթացը նախորդ դարի 90-ականների սկզբին նշանավորվեց նրա որակական փոփոխություններով, որոնք առնչվում էր քաղաքական համակարգի բոլոր բաղկացուցիչներին, առաջին հերթին՝ պետությանը:

Պետականության տևական բացակայությունը, խորհրդային անցյալը վատ հենք էին կառավարման ճիշտ ու արդյունավետ ձև ընտրելու համար:

Հայաստանի Հանրապետությունն իր անկախ պետականության այս քառորդ դարի ընթացքում, ըստ էության, ունեցել է կառավարման և՛ նախագահական, և՛ կիսանախագահական ձև, իսկ այսօր արդեն ունի կառավարման պառլամենտական ձև:

21. 1990-ական թվականների սկզբներին, երբ երկրում բացակայում էին ժողովրդավարական ինստիտուտները, թույլ էր քաղաքացիական հասարակությունը, հանրային ընկալման մեջ տարածված էր այն գաղափարը, որ նման երկիրը կառավարել կարող է միայն խիստ անձնավորված իշխանությունը՝ Հանրապետության նախագահի ինստիտուտի ստեղծման և ուժեղացման միջոցով: Հանրապետության նախագահի ընդգծված դիրքը պայմանավորված էր նաև Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակով, իսկ ավելի ուշ՝ առաջին Հանրապետության նախագահի կողմից իր անձնական իշխանությունը ամրապնդելու և պահելու ձգտմամբ: Այս փուլում Ազգային ժողովի դերի ցանկացած բարձրացում դիտվում էր որպես ապակայունացնող տարրերի մեծացում:

22. Տևական ժամանակ էր պետք սեփական փորձից հասկանալու, որ պետության առջև ծառայած խնդիրները հնարավոր չէ լուծել առանց ուժեղ, կայուն, աշխատունակ ներկայացուցչական մարմնի՝ Ազգային ժողովի, որի գլխավոր խնդիրը բնակչության մեծամասնության շահերի պաշտպանությանն ուղղված հետևողական քայլերի իրականացումն է, որտեղ հաշվի է առնվում նաև փոքրամասնության կարծիքը:

23. 1990-ականների սկզբներին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի մշակման համատեքստում բավական ակտիվորեն ընթանում էր կառավարման օպտիմալ մոդելի որոնման գործընթացը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը պետք է լուծեր մի շարք խնդիրներ, որոնցից առանցքային էր սոցիալ-տնտեսական և քաղաքական հին համակարգերի արմատական վերափոխումը: Այդ ժամանակահատվածում հասարակական-քաղաքական տարբեր ուժերի կողմից առաջարկվել են սահմանադրության տարբեր նախագծեր, որոնք ձգտել են հաշվի առնել ժողովրդավարական պետությունների (Ֆրանսիա, ԱՄՆ, Գերմանիա և այլն) սահմանադրական-իրավական փորձը: Այդ նախագծերն արտահայտում էին գաղափարների մի ամբողջ սպեկտր այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպվի պետական իշխանությունը: Մի շարք նախագծեր, առաջին հերթին՝ սահմանադրական հանձնաժողովի կողմից առաջարկված տարբերակները, բովանդակել են նախագահական ուժեղ իշխանության գաղափարը՝ որպես անհրաժեշտ գործոն երկրում արմատական բարեփոխումներ իրականացնելու համար: Ի տարբերություն պաշտոնական նախագծերի՝ խորհրդարանական ընդդիմությունը, իր բազմաթիվ նախագծերով, հանդես էր գալիս կառավարման պառլամենտական ձևի անցնելու օգտին: Նախագծերի մեծ մասի համար ընդհանուրն այն էր, որ Սահմանադրությունը պետք է լիներ ապահուրհրդայնացված, զերծ կուսակցական գաղափարախոսությունից, արտահայտեր հումանիզմի և համամարդկային արժեքների գաղափարները: Ապագա Սահմանադրությունը կոչված էր ամրագրել և երաշխավորել ժամանակակից ժողովրդավարական և իրավական պետության հիմքերը, տնտեսական հարաբերությունների ազատականացումը: 1995թ. Սահմանադրության ընդունմամբ խորհրդային տիպի հանրապետության ապամոնոստաման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում կարելի էր ավարտված համարել:

24. Խորհրդային տիպի պետության փլուզմանը հաջորդած անցումային ժամանակահատվածի պայմաններում չէր կարող անմիջապես ձևավորվել ժողովրդավարական վարչակարգ: Գործող վարչակարգն իր մեջ զուգակցում էր վարչաիրամայական կառավարման անցյալ համակարգի և նորաստեղծ ժողովրդավարության հակասություններ, ընդ որում՝ առաջինի գերակշռմամբ:

25. Թեպետ 1995թ. Սահմանադրության ընդունումից կարճ ժամանակ անց արդեն ակնհայտ էին կառավարման ձևի թերությունները, սակայն մտայնություն կար, որ անթույլատրելի է կառավարման մեկ ձևից կտրուկ անցում կատարել մյուսին: Շատերը պնդում էին, որ այն

պայմաններում, երբ երկրում հասարակության կյանքի բոլոր ոլորտներում տեղի են ունենում արմատական փոփոխություններ, կառավարման կիսանախագահականից դեպի կառավարման պառլամենտական ձևի անցում իրականացնելը ռազմավարական սխալ կլիներ: Նշվում էր, որ այն իրավիճակում, երբ երկրի տնտեսությունը գտնվում է մոդեռնիզացման առաջին փուլում, կառավարման պառլամենտական ձևը սակավ արդյունավետ է, քան կիսանախագահականը: Որոշները գտնում էին, որ պետք է գնալ նախագահի որոշ լիազորությունները պառլամենտով հակակշռելու ճանապարհով: Ոմանք էլ գտնում էին, որ ժամանակ է պետք է գործող համակարգը փորձարկելու, կատարելագործելու և աստիճանաբար մոդեռնիզացնելու համար:

26. 1995թ. Սահմանադրությունը ուղղակիորեն հարցականի տակ էր դնում, մասնավորապես, փոխադարձ զսպումների և հակակշռների մեխանիզմները՝ ամրագրելով Հանրապետության նախագահի գերակա դերը իշխանության բոլոր ճյուղերի նկատմամբ:

27. 2005թ. սահմանադրական փոփոխությունները կարելի է անվանել ակնհայտ բացերի շտկման փուլ, որը, սակայն, ձեռնպահ մնաց Սահմանադրության խորքային, բովանդակային թերությունները շտկելուց:

2005թ. Սահմանադրության փոփոխությունները նպատակ էին հետապնդում ունենալ ավելի հավասարակշռված կառավարման ձև, որի ապահովումն անհնարին էր առանց կառավարության կազմավորման և կառավարության երկակի պատասխանատվության հետ կապված իրավակարգավորումների փոփոխության:

28. 2005թ. սահմանադրական փոփոխություններով Հայաստանի Հանրապետությունը կառավարման կիսանախագահական ձևի նախագահա-պառլամենտական մոդելից անցում կատարեց պառլամենտ-նախագահական մոդելին: Հանրապետության նախագահը զրկվեց վարչապետին ազատելու հայեցողական լիազորությունից, որի արդյունքում վերացվեց կառավարության երկակի պատասխանատվությունը Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի առջև:

29. 2005թ. սահմանադրական փոփոխություններից հետո Հայաստանի Հանրապետության կառավարման ձևը՝ Հանրապետության նախագահի գերակա դերակատարմամբ, գործում էր առանց ինստիտուցիոնալ խոչընդոտների ոչ թե այն պատճառով, որ Հանրապետության նախագահն ուներ սահմանադրա-իրավական մեծ լիազորություններ, այլ որ Ազգային ժողովում կար քաղաքական մեծամասնություն, և Հանրապետության նախագահը դրա լիդերն էր:

30. 2005թ. սահմանադրական փոփոխությունները գործնականում որևէ էական փոփոխություն չմտցրեցին քաղաքական կյանքում Հանրապետության նախագահի գերակա դիրքի մեջ, չնայած որ այդ փոփոխությունները առնվազն de jure թույլ էին տալիս, որ բարձրանա Ազգային ժողովի և կառավարության դերակատարումը:

Թեպետ 2005թ. սահմանադրական փոփոխություններով ընդլայնվեցին կառավարության նկատմամբ Ազգային ժողովի վերահսկիչ լիազորությունները, սակայն դրանք բավարար չէին գործադիր իշխանության ընդհանրապես և Հանրապետության նախագահի մասնավորապես գերիշխող դերը պետական մարմինների համակարգում մեղմելու համար: Ազգային ժողովը չդարձավ իրական հակակշռ գործադիր իշխանությանն ու Հանրապետության նախագահին: Պետական իշխանության ճյուղերի անհավասարակշռության խնդիրը շարունակվում էր մնալ չլուծված: Հավասարակշռված համակարգի ստեղծման անհրաժեշտությունն ակնհայտ էր, ինչը, սակայն, անհնար էր առանց արմատական սահմանադրական փոփոխությունների:



31. Սահմանադրական-իրավական ոլորտում աստիճանաբար հասունանում էին պետության ու հասարակության մեջ գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված մեխանիզմների ստեղծման ու կենտրոնացման հաղթահարման գաղափարները՝ կառավարական ձևի փոփոխության, ընտրական համակարգի կատարելագործման, կուսակցական համակարգի ամրապնդման ու զարգացման, քաղաքացիական հասարակության կառուցվածքների հետ պետության հետադարձ կապի խողովակների ստեղծման միջոցով:

32. Պետական իշխանության բարձրագույն մարմինների միջև փոխհարաբերությունների բարեփոխումները նոր խթան ստացան 2013 թվականից, երբ Հանրապետության նախագահի հրամանագրով ձևավորվեց սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողով: Վերջինիս առջև դրված առաջնային խնդիրներից էր իշխանությունների լիարժեք հավասարակշռման ապահովումը և հանրային կառավարման արդյունավետության բարձրացումը:

33. Կառավարման պառլամենտական ձևը առավել արդյունավետ է գործում զարգացած և նշանակալիորեն ինքնակարգավորվող տնտեսությամբ և երկրորդ՝ կայուն քաղաքական կառուցվածքով ու կայացած կուսակցություններ ունեցող պետություններում:

34. Կառավարման պառլամենտական ձևին անցնելու դեպքում առավել քան կարևորվում էր հատկապես կառավարության կայունության, պառլամենտի վերահսկողական լիազորությունների, պառլամենտական փոքրամասնությունների, ինչպես նաև Հանրապետության նախագահի գործառույթների, լիազորությունների և ընտրության կարգի հետ կապված հարաբերությունների ճիշտ կարգավորումը:

35. Կառավարման պառլամենտական դասական ձևի համեմատ՝ 2015թ. փոփոխությունները մի շարք էական տարբերություններ ու նորամուծություններ են պարունակում, որոնք բխում են Հայաստանի Հանրապետության առանձնահատկություններից, պայմանավորված են քաղաքական մշակույթով և նպատակ են հետապնդում ապահովելու արդյունավետ ու հավասարակշռված պետական համակարգ, կառավարությունների կայունություն, քաղաքական հանդուրժողականության:

36. Պառլամենտական կայուն մեծամասնության ապահովման համար էական նշանակություն ունեն ընտրություններն ընդհանրապես, և նեղ իմաստով ընտրական համակարգը՝ մասնավորապես:

Սահմանադրությամբ ամրագրված ընտրական համակարգը նպաստում է երկբևեռ կուսակցական համակարգի ձևավորմանը, քանզի խթանում է, որպեսզի կուսակցությունները հաջողության հասնելու համար միավորվեն կամ դաշինքներ կազմեն քաղաքական և գաղափարախոսական առումով մոտ ուժերի հետ: Դա վերաբերում է ինչպես ընտրության առաջին, այնպես էլ երկրորդ փուլին:

37. Կառավարման պառլամենտական ձևի պայմաններում քաղաքական բաժանարար հիմնական գիծը անցնում է ոչ թե կառավարության և պառլամենտի, այլ քաղաքական մեծամասնության ու պառլամենտական փոքրամասնության միջև: Այդ պատճառով էլ Սահմանադրությունը պառլամենտական փոքրամասնությանը վերապահել է իր դերին համարժեք լիազորություններ:

Պառլամենտական փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման տեսանկյունից առանձնահատուկ նշանակություն ունի քննիչ հանձնաժողովներ ստեղծելու և դրանք նախագահելու իրավունքը:

38. Արցախի Հանրապետության 2006 թվականի Սահմանադրությունն իր վրա էականորեն կրում էր 1995թ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և դրա 2005թ. Փոփոխությունների ազդեցությունը: Բնականաբար, դրան բնորոշ էին կառավարման այդ ձևի բոլոր հիմնա-

կան թերությունները: Այստեղ հայաստանյան բարդություններին ավելանում էին չդադարող ռազմական միջադեպերը, սահմանային լարվածությունը: Ստեղծված իրավիճակը չէր կարող իր ազդեցությունը չթողնել սահմանադրական ապագա իրավակարգավորումների վրա: Չէին կարող հաշվի չառնվել պետության ներուժն արագ մոբիլիզացնելու, անվտանգության, պաշտպանության ոլորտում արդյունավետ համակարգեր ունենալու խնդիրները: Բնականաբար, այս խնդիրների լուծումները ուղղակիորեն կապված են նաև կառավարման ճիշտ ձևի սահմանման հետ:

39. Արցախի Հանրապետության առջև ծառայած մարտահրավերները պահանջում են ուժեղ և միասնական գործադիր իշխանություն, որն ի վիճակի կլինի ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական պայմաններում համախմբել պետության բոլոր միջոցները և օպերատիվ արձագանքել ստեղծված իրավիճակի պահանջներին: Այդ իսկ պատճառով Արցախի Հանրապետության համար առանձնակի կարևորություն է ունեցել գործադիր իշխանության կայունության հարցը:

Արցախի Հանրապետության առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ազգային միասնության խորհրդանիշ հանդիսացող Հանրապետության նախագահը օպերատիվ կառավարման, ռազմական դրության պայմաններում, պատերազմական գործողությունների ժամանակ շատ ավելի արդյունավետ կարող է գործել կառավարման նախագահական ձևում:

40. 2017թ. Արցախի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրված կառավարման ձևը կարելի է անվանել «մոդեռնիզացված նախագահական ձև» կամ «կառավարման նախագահական ձև՝ պառլամենտական ձևի էլեմենտներով»: Այն ունի հսկայական ներուժ՝ խուսափելու կառավարման նախագահական և պառլամենտական ձևերի հիմնական թերություններից:

41. Կառավարման կիսանախագահական ձևի ներուժը բավարար չէր հայկական երկու պետությունների առջև ծառայած խնդիրների լուծման համար: Կառավարման կիսանախագահական ձևը պարունակում է կոնֆլիկտներ ու փակուղիներ ստեղծելու մեծ ներուժ, որի պայմաններում կառավարման այդ ձևի շրջանակներում կատարված փոփոխությունները չեն կարող ամբողջությամբ լուծել առաջ եկող խնդիրները, վերացնել կառավարման այդ ձևի թերությունները: Հայկական երկու պետությունների կառավարման ձևերը գտնվում են կայացման ու զարգացման փուլում: Դրանց արդյունավետությունն էականորեն կախված է երկու երկրների Սահմանադրություններին համահունչ, ինչպես նաև կառավարման պառլամենտական և նախագահական ձևերի միջազգային լավագույն փորձը հաշվի առնող հետագա օրենսդրական կարգավորումներից: Կառավարման պառլամենտական և նախագահական ձևերի ողջ ներուժը օգտագործելու ուղղությամբ պետք է կատարել կոնկրետ քայլեր՝ երկու պետությունների պատմական ավանդույթների և քաղաքական մշակույթի հաշվառմամբ:

## **Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

1. Հրայր Թովմասյան, Կառավարման ձևի ինստիտուտի ուսումնասիրության անհրաժեշտությունը, կառավարման ձևի սահմանման հիմքերը: «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես: N 92, 2016, էջեր 8-11, (Երևան):

2. Հրայր Թովմասյան, Լեհաստանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության նախագահների սահմանադրական կարգավիճակի համեմատական վերլուծությունը կիսանախագահական կառավարման ձևի համատեքստում: «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր: Ապրիլ-մայիս 2016, N 4-5 (202-203), էջեր 2-7, (Երևան):

3. Հրայր Թովմասյան, Վարդան Պողոսյան, Արցախի Հանրապետության կառավարման համակարգի թերությունները, կառավարման ձևի բարեփոխման հնարավոր ուղիները: «Արդարադատություն» գիտական հանդես: N 2 (33), 2016, էջեր 3-9, (Երևան):

4. Հրայր Թովմասյան, Նախագահական և խորհրդարանական կառավարման ձևերի առավելություններն ու թերությունները: «Հանրային կառավարում» գիտական հանդես: N 3/2016, էջեր 33-41, (Երևան):

5. Հրայր Թովմասյան, Նախկին Խորհրդային միության տարածքում կազմավորված պետությունների կառավարման համակարգերի հիմնական արատները: ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր: N 4 (82), 2016, էջեր 5-16, (Երևան):

6. Հրայր Թովմասյան, Վարդան Պողոսյան, Հայաստանի Հանրապետության՝ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները Հանրապետության Նախագահի գործառույթների և լիազորությունների հարցերում: «Արդարադատություն» գիտական հանդես: N 3 (34), 2016, էջեր 2-8:

7. Հրայր Թովմասյան, Վարդան Պողոսյան, Հայաստանի Հանրապետության 2005թ. Սահմանադրական փոփոխությունները կառավարության կազմավորման և վարչապետին ազատելու հարցերում: «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես: N 95, 2016, էջեր 8-14, (Երևան):

8. Հրայր Թովմասյան, Վարդան Պողոսյան, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի սահմանադրաիրավական կարգավիճակը և լիազորություններն ըստ 1995թ. հուլիսի 5-ի Սահմանադրության: «Արդարադատություն» գիտական հանդես: N 4 (35), 2016, էջեր 3-9:

9. Հրայր Թովմասյան, Կառավարման ձևերի համեմատական վերլուծություն (Պորտուգալիա, Հայաստանի Հանրապետություն): «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես: N 96, 2016, էջեր 6-11, (Երևան):

10. Հրայր Թովմասյան, Կառավարման կիսանախագահական համակարգի ենթադասակարգումը: «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր: Հոկտեմբեր-նոյեմբեր 2016, N 10-11 (208-209), էջեր 4-11:

11. Հրայր Թովմասյան, Ֆրանսիայի Ժամանակակից կառավարման համակարգը, ձևավորման հիմքերը: «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր: Դեկտեմբեր 2016, N 12 (210), էջեր 16-25:

12. Հրայր Թովմասյան, Նախագահական կառավարման ձևի ծագումն ու զարգացումը, բնութագրիչները, պետական իշխանության կազմակերպման մոդելը նախագահական հանրապետությունում: «Արդարադատություն» գիտական հանդես: N 1 (36), 2017, էջեր 3-9:

13. Հրայր Թովմասյան, Պառլամենտական կառավարման ձևի բնութագրիչները, առավելությունները, թերությունները: «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր: Հունվար-փետրվար 2017, N 1-2 (211-212), էջեր 14-21, (Երևան):

14. Հրայր Թովմասյան, Ֆինլանդիայի կառավարման ձևի առանձնահատկությունները կառավարման կիսանախագահական համակարգի համատեքստում: «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես: N 97, 2017, էջեր 36-40, (Երևան):

15. Հրայր Թովմասյան, Օրենսդիր ու գործադիր իշխանությունների փոխազդեցության առանձնահատկությունները կիսանախագահական հանրապետությունում՝ Ֆինլանդիայի Հանրապետության օրինակով: «Արդարադատություն» գիտական հանդես: N 2 (37), 2017, էջեր 2-10, (Երևան):

16. Հրայր Թովմասյան, Կառավարման ձևի հասկացությունը: «Արդարադատություն» գիտական հանդես: N 3 (38), 2017, էջեր 4-12, (Երևան):

17. Հրայր Թովմասյան, Վարդան Պողոսյան, Կիսանախագահական համակարգի ձևախեղումը Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությունում: ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր: N 2 (86), 2017, էջեր 5-12, (Երևան):

18. Товмасын Г.В., Погосян В.Г. Устраняет ли полупрезидентская форма правления недостатки президентской и парламентской форм правления? Евразийский юридический журнал. N 3 (106), 2017, ст. 90-96, (Մոսկվա):

19. Товмасын Г.В. Современный Нагорный Карабах. Евразийский юридический журнал. N 4 (107), 2017, ст. 66-70, (Մոսկվա):

20. Hrayr Tovmasyan, Comparative analysis of the systems of government of the Republic of Poland and the Republic of Armenia. Studia Iuridica tom 68. Miscellanea. Warsaw 2016, p. 393-402, (Վարշավա):

21. Товмасын Г., Погосян В. Эволюция формы правления в Армении. Конституционное правосудие. Вестник конференции органов конституционного контроля стран новой демократии. Выпуск 1 (75), 2017, ст. 13-45:

22. Hrayr Tovmasyan, Comparative analysis of basic institutions of the system of government in the several post-Soviet states. "South Caucasus Law Journal", 8th edition (10/2017)՝ P. 8-13, 174-179, (Թբիլիսի):

**ГРАЙР ВАРДАНОВИЧ ТОВМАСЯН**

**ПОЛУПРЕЗИДЕНТСКАЯ ФОРМА ПРАВЛЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**(КОНСТИТУЦИОННАЯ МОДЕЛЬ И РЕАЛИИ)**

Диссертация на соискание учёной степени доктора юридических наук по специальности 12.02.02

«Публичное право»

Защита диссертации пройдет 23 сентября 2017 года, 12:00 часов на заседании профессионального совета 041 юриспруденции Академии государственного управления РА (Высшая аттестационная комиссия Республики Армения), 0028, г. Ереван, Киевян 8).

## РЕЗЮМЕ

Данная диссертационная работа посвящена всестороннему исследованию проблем, связанных с формой правления Республики Армения.

С первых дней обретения независимости вопрос выбора формы правления со всей своей остротой стоял перед Республикой Армения. В эти годы независимости Республика Армения имела советскую парламентскую, затем – президентскую, президентско-парламентскую, парламентско-президентскую форму правления, а после 2015-го года была установлена парламентская форма правления.

Изучение формы правления имеет не только теоретическое, но и практическое значение, в частности, позволяет составить полную картину текущего состояния той или иной государственности, выявляет определенные закономерности и тенденции ее изменения и развития, дает возможность выбрать ту форму правления, которая, принимая во внимание особенности данной страны, максимально прогарантирует развитие, стабильность, демократию этого государства.

Полупрезидентская форма правления мало изучалась юридической и политической науками. Хотя некоторые аспекты этой проблемы освещались в отечественных публикациях, в юриспруденции о ней специальных монографических исследований нет.

Объект исследования – концепция ”формы правления”, ее разновидности, формы правления Армении и Арцаха.

Предметом исследования являются институты Президента, Национального собрания и правительства в правовой системе Армении и Арцаха, в особенности, конституционные гарантии их создания, организации и функционирования, роль каждого института в управлении государством, их отношения друг с другом и населением.

Целью исследования является всесторонний анализ преимуществ, недостатков полупрезидентской системы, теоретических и практических аспектов ее применения в Армении и Арцахе.

Значительные новшества введены в понятийный аппарат юриспруденции, уточнен ряд понятий ”модернизированная парламентская форма правления”, ”модернизированная президентская форма правления” и т.д.

**Научная новизна исследования, в частности, состоит в следующем:**

проведен всесторонний анализ армянских и арцахских вариантов полупрезидентской формы правления, в сравнительном контексте исследованы конституционно-правовые и практически-политические стороны нетипичной полупрезидентской системы Республики Армения и Республики Арцах, указаны дефекты армянской и арцахской полупрезидентской системы, причины их возникновения, дано теоретическое и практическое обоснование отказа от полупрезидентской формы правления в Республике Армения и Республике Арцах, определены содержание и факторы президентизирования полупрезидентской системы, даны обоснования перехода к модернизированной парламентской системе в Армении и к модернизированной президентской системе в Арцахе.

Положения, содержащиеся в работе, выводы и рекомендации, связанные с текущими вопросами государственно-правового развития Республики Армения, формируют необходимую теоретическую базу для обеспечения устойчивости государственного управления, обоснования практических мер совершенствования системы государственной власти.

Основные выводы и рекомендации диссертации могут быть применены для дальнейшего совершенствования законодательства, регулирующего отношения конституционных органов Республики Армения и Республики Арцах.

**HRAYR VARDAN TOVMASYAN**

**THE SEMI-PRESIDENTIAL SYSTEM OF GOVERNMENT IN THE REPUBLIC OF ARMENIA  
(CONSTITUTIONAL MODEL AND REALITY)**

Dissertation for the degree of Doctor in Law on the specialization of 12.00.02 «Public Law»

The defense of the dissertation will be hold on 23 September 2017, at 12:00 o'clock, at the meeting of the professional council of jurisprudence No. 041 of the Academy of Public Administration of the Republic of Armenia (The Higher Attestation Commission of the Republic of Armenia, 0028, Kievyan 8 str., Yerevan).

### SUMMARY

The doctoral dissertation provides for a comprehensive analysis of the issues related to the system of the government in the Republic of Armenia. From the very first days of independence Armenia faced with all its sharpness the question of choice of an appropriate system of government. During these years of independence Armenia has had Soviet type of parliamentarism, followed by presidential-parliamentarian and parliamentarian-presidential systems, and since 2015 parliamentarian system of government has been set up.

The analysis of the system of government has not only a theoretical value, but also a practical one, particularly it allows to have a complete picture of the current state of one or another statehood, reveals certain patterns and trends of its modification and development, allows to choose the form of government which, according to the peculiarities of the given state, will guarantee the development, stability and democracy of that state to the greatest extent.

Semi-presidential system of government has not been thoroughly studied by Armenian legal and political science. Although several aspects of the issue have been covered in domestic publications, there are no special monographs in the field of law. The object of the research is the concept of "system of government", its subtypes, the systems of government in Armenia and Artsakh.

The subject of research are the institutes of the President, National Assembly and Government in the legal system of Armenia and Artsakh and, in particular, the constitutional guarantees of their establishment, organization and operation, the role of each institution in the governance of the state, their relationships with each other and with the population.

The purpose of the research is to provide a complex analysis of the advantages and disadvantages of the semi-presidential system, examination of theoretical and practical aspects of their application in Armenia and Artsakh.

The scientific novelty of the research, in particular, is as follows:

- innovative legal definitions and terms have been introduced and clarified, such as "modernized parliamentary form of government", "modernized presidential form of government", etc.

- a complex analysis of Armenian and Artsakh versions of semi-presidential system of government has been conducted,

- in the comparative context, the constitutional and legal-political aspects of the semi-presidential non-standard system of government of the Republic of Armenia and the Republic of Artsakh have been studied, the shortcomings of the Armenian and Artsakh semi-presidential system, the causes of their occurrence are indicated,

- theoretical and practical justifications for the departure from the semi-presidential system of government in the Republic of Armenia and the Republic of Artsakh are given,

- the content and factors of the presidentialization of semi-presidential form have been revealed;

- the justifications of the transition to modernized parliamentary system in Armenia and to modernized presidential system in Artsakh are provided.

The provisions, conclusions and recommendations contained in the work related to the current issues of the development the state and legal affairs of the Republic of Armenia, comprise the necessary theoretical base for the establishment of stable system of state administration in the Republic of Armenia and substantiation of practical measures to improve the state power system.

The main conclusions and recommendations of the thesis may be applied for the further improvement of the legislation governing the relations among the constitutional bodies of the Republic of Armenia and the Republic of Artsakh.